



ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ԾԱՅՐԵՐԸ

Վերջին երեք տարուան պատահարները պարտաւորեցին Հայ ժողովուրդը քննել եւ հասկնալ թէ ինչո՞ւ հասարակական արիւն, այնքան անձնուիրութիւն Հայաստանի վիճակը բարեշրջելու տեղ աւելի վատթարացուցին, զոնէ առժամաբար: Ու տեսնուեցաւ թէ շատ սխալներ գործուած են սրոնց մեծերէն մէկն է՝ իրականութիւնը նշկատողութեան շաննելու մեր հակամիտութիւնը: Հայոց քաղաքական ղեկավարը մտքի տեղ սիրտը եղած է: Այս ճշմարտութեան անդամ մը վերահասու ըլլալէ ետքը ազդին աչքը բացուեցաւ, եւ ըմբռնեց թէ ա՛լ պէտք է իրականութեան հետամուտ ըլլալով ըստ այնմ շարժի:

Բայց ի՞նչ է «իրականութիւն» ըսուածը. ի՞նչպէս սահմանելու է այդ բացատրութիւնը. միթէ լոկ բարի կամ մեցողութեամբ անհատ մը, ժողովուրդ մը կրնա՞յ մէկ օրէն միւսը այնքան սրակնեայ աչքեր ունենալ որ քաղաքական իրականութիւնները տեսնէ: Ո՛չ. իրականութիւնը տեսնելու համար շատ բան պէտք է սորվիլ: Բայց ամէն կողմէ սկսան Հայերը «իրականութիւն, իրականութիւն» գոչել: Եւ ահա կարգ մը մարդիկ՝ բարեմիտ կամ ծանծաղամիտ՝ ներկայացան ազգին իբր իրականութեան պատասաններ, եւ իրենց ամբողջ գիտութիւնը ուզեցին ազգին սորվցնել կարճաօտ բանաձեւով մը: «Իրականութիւնը ըսելով պէտք է հասկնալ, յայտարարեցին, Հայութեան համար լաւագոյն ապագայի ո՛ր է խորհուրդ, ո՛ր է յոյս ընալին՞ անհետացնել ազգին մտքէն:» Եւ որովհետեւ Հայ ազգը քաղաքական դատարարութիւն չէ ստացած, մեծ վախ կայ թէ այս բանաձեւը ընդունուի իբր հեռատես քաղաքականութեան ու սրտցաւ հայրենասիրութեան խորիմաստ պատուիրանքը: Երէկ խանգալա՛ն երեւակայութիւնն էր մեր քաղաքական առաջնորդը, այսօր սեւամա՛ղձ երեւակայութեան կ'ուզեն յանձնել այդ պաշտօնը: Մէկ ծայրայեղութենէ միւսը. մեծ վտանգէն մեծագոյնը:

Շատ վախ կայ որ Յուսահատութիւնը եւ իրականութիւնը իրարու հետ շփոթենք. եւ այս շփոթութիւնը ազիտաբեր պիտի ըլլայ ազգին: Երբեք մտքէ անցընելու չէ թէ իրականութիւն ըսելով հասկնալու ենք՝ լքում հայկական

դատին, ջնջում բարենորոգումներու ստիպողական հարկին, ամէն կողմէ թշնամութիւն Հայ ազգին դէմ, եւ վերջնական յաղթանակ սուլթանին քաղաքականութեան: Ո՛չ, իրականութիւնը շատ բարդ է, ու մինք այս էջերուն մէջ շատ զգուշութեամբ, զրեթէ ծայրայեղ շրջահայեցողութեամբ, կը ջանանք անոր բազմակողմի երեւոյթները պարզել: Ու որքան աւելի կը յառաջանանք այս աշխատութեան մէջ, այնքան աւելի կը համոզուինք որ Հայաստանի վիճակը հիմնովին պիտի բարեփոխուի, պայմանաւ սակայն որ երբեք չյուսահատինք, եւ Հայաստանի բարենորոգումներու դատը ճշմարտապէս ազգային դատ ընենք, եւ ո՛չ թէ կուսակցական մենաշնորհ մը, կամ շահախնդրութիւն մը:

Յուսատու երեւոյթներէն մէկը այսօր ազգային ուշադրութեանը ներկայացնենք:

* * *

Հայկական կոտորածներէն ետքը ուշադրաւ երեւոյթ մըն է եւրոպական երեք մեծ պետութիւններու ձեռնարկները՝ Հայաստանի մէջ իրենց բարոյական կուսան մը պատրաստելու նպատակաւ, յենարան ունենալով հայցեղը: Անպիլա որ արդէն վաղուց է միտինարներու միջամտութեամբ իր լեզուին հետ իր ազդեցութիւնը կը սփռէ վասպուրականէն Սեւ ծով ու Միջերկրական, զրեթէ միշտ Հայոց կոթնած, վերջին պարագաներէն մեծապէս օգտուեցաւ մեզի մատուցած մարդասիրական օգնութիւններովը աւելի հզօրապէս տիրելու մեր սրտին ու մտքին եւ յարածուն որքանոցներու շնորհիւ մօտաւոր ապագայի մը մէջ իր ձեռքին տակը ունենալու Անդլիոյ նուիրուած զօրաւոր սերունդ մը:

Միեւնոյն ատեն Ֆրանսա, կաթոլիկութեան դիմակին տակ, կը սկսի շահագրգռուիլ Հայաստանով: Ֆրանսայի արեւելեան գործունէութիւնը Սուրիոյ կողմերը կեդրոնացած է. բայց վա՛նի սովին առթիւ Ֆրանսայի հիւպատոս-կրօնաւորներու ցոյց տուած եռանդը (զոնէ խումբ մը Հայեր կաթոլիկութեան վարձնելու համար,) ակներեւ նշան մըն է թէ Ֆրանսա կը միտի միջազգային իրաւունք մը ձեռք բերել ի հարկին Հայաստանի գործերուն միջամտելու համար:

Մինչեւ հիմա Ռուսիա Հայաստանի նկատմամբ իր ծրագիրներուն յաջողութեանը համար Հայոց մէջ կրօնա-

կան ու կրթական տարածումի պէտք չէր տեսած, բայց հիմա Եղբայրական-օգնութիւն քաղցրահնչակ անունին ներքեւ առաջին հայ-ուսական դպրոցը կը հիմնուի Հայաստանի մէջ, Բալու: Հիմնաքարը զետեղուեցաւ:

Երեք պետութիւնները սրոնք Սասունի գեղերէն ետքը Հայաստանը բարեկարգելու հոգը իրենց վրայ կ'առնէին, այդ երեքը մեր բոլոր աղէտներէն յետոյ դարձեալ կը ջանան ստեղծելու ամուր կոխել Հայաստան. ու կը թափն մեր վրայ, մեզի է որ կ'ուզեն ափերնուն մէջ առնել: Արհամարհելի քանակութիւն մը չենք:

Հայաստանի մէջ հայ ժողովուրդը ստուար մեծամասնութիւն մը չի կազմեր. թիւրք իշխանութիւնը Հայոց թիւը միշտ պատրուակ կը համարի ո՛ր է քարենորոգումի ծրարքը մերմելու համար, եւ սակայն այդ փոքր թիւն է որ Եւրոպայի արեւելեան քաղաքականութեան առանցքը կը դառնայ: Քիւրտերը, թիւրքերը, Յոյները, Եզիտները եւ զիս ուրիշ ցեղեր միանալով թէեւ մեզի դէմ ահապին թիւ մը կը կազմեն, բայց իրականութեան մէջ արհամարհելի քանակութիւնը անօնք կը յօրինեն: Լոկ թիւը ո՛ր է ու չի ներկայացնէր, երբ բարոյական արժանիքէ զուրկ է: Հայ ցեղը զօրութիւն մը կը մարմնացնէ օսմանեան կայսրութեան մէջ, վասն զի միշտ տոգոհ է, գաղափարի մը կը ծառայէ, նպատակի մը կը դիմէ: Որքան ալ հարձուի, չարչարուի, կոտորուի, մեծամեծ սխալներ գործէ, իր մէջ բաժան բաժան ըլլայ, զարձեալ մեծ ուժ մըն է, վասն զի անփոփոխ նպատակի մը կը դիմէ անընկճելի յարատեւութեամբ: Անհատը ամբողջն իր կը բարձրանայ եւ բարձրադուլ կը կանգնի երբ նպատակ մը ունի, եւ անոր հասնելու կամքը ու կարողութիւնը չեն պակսիր իրեն. այսպէս ալ հայ ցեղը զինքը շրջապատող բոլոր ցեղերէն սրոնք ամբողջ կը կազմեն— իր բարձրանալու, եզերիչ-խելու կոչուած է, վասն զի այդ նպատակը առաջադրած է, անոր ժամանելու աննկուն կամքը ունի, եւ մտքի ու բարոյականի ուժերով ջլապնդուած է: Հայը թիւի մէջ չի խըղդուիր. այս ճշմարտութիւնը փորձառութեամբ զգացած են Եւրոպացիները: Ուստի ամենքն ալ երբ ասիական թիւրքիոյ հայկական մասերուն մէջ պիտի գործեն, ո՛չ քիւրտի, ո՛չ թիւրքի, ո՛չ եզիտին վրայ պզտիկ յոյս մը դրած են. երկրին տէրը անօնք չեն:

Հայկական կոտորածները, թալանները, աղէտները փորձառութեամբ մը, մեզի համար շատ դառն թէեւ, այս ճշմարտութիւնը հաստատեցին: Կրեալ իր երկարատեւ ապրտամբութիւնովը, ուրիշ նահանգներ իրենց կրած ջարդերով այս պարուս մէջ, այնքան դառնազէտ հետեւանքներ շտապանացան թիւրք պետութեան որքան սարսափազդեցիկ եղաւ արիւնի մէջ լողացող հայկական խնդիրը, որ թիւրքիոյ համար իրապէս «մահու ե կենաց» կոչուած խնդիրն է: Սուլթանին ահապողը, թիւրքիոյ տնտեսական, ընկերական, վարչական տաղնապը սրոնք 1893էն ի վեր օրէ օր կը ոստականան, կը ծանրանան, կ'ապացուցանեն օսմանեան կայսրութեան մէջ հայ ժողովրդին նիւթական ու բարոյական ուժին զերակշուութիւնը: Հայը

թիւրք կայսրութեան մէջըն սուրն է. երբ կը կոտորի սուրբ, կը քայքայուի մարմինը: Այս համոզումն ալ իսկական իրականութիւնը կը ներկայացնէ սրուն գիտակցութիւնը եթէ ունենանք, ո՛չ կը շուարինք, ո՛չ կը յուսահատինք: Մեզի համար մեծ վտանգ մը միայն կը սպառնայ, մէկ ծայրայեղութենէ միւսը ցատքելու վտանգը, որ կրնայ մեզի անգունը գահալիծել:

ՌՈՒՍ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԱՍԻՆ

Գ

Շատեր չեն զիտեր թէ Կովկասի մէջ այս վերջին երկու երեք տարիներս կոխը անպակաս է ուս իշխանութեանց եւ տեղացի ժողովրդին անօրէն տարրին միջեւ: Աւագակութիւնը եւ սպանութիւնը երկիւղալի կերպով շատցած են, եւ կանոնաւոր ճակատամարտներ յաճախ կը պատահին: Անցեալ տարի 184 աւագակ բռնուեցան եւ 33 սպանուեցան ոստիկանութեան եւ զօրքերու հետ կռուի մէջ: Չինուրական կտրուկ դատաւարութիւնը սովորական օրէնքներուն յաջորդած է, եւ նոր ընդհանուր կառավարչին գրեթէ բացարձակ իշխանութիւն արուած է, Կալիցին իշխանին տեղեկագիրը սապէս կը խօսի այս մասին:

«Չոր Վեհափառութիւնը գիտնալու է որ աւազակութեան պատճառները շատ բարդ են: Այդ պատճառներն են, մասամբ՝ ժողովրդին կեանքին պայմանները, մասամբ՝ ոստիկանութեան անբաւարարութիւնը, եւ վերջապէս՝ դատական եւ վարչական արդի կանոնադրութեանց թերութիւնները: Կեղերական կառավարութիւնը լիովին ըմբռնած է այս խնդրին մեծ կարեւորութիւնը, եւ 1896 նոյեմբեր 11 եւ 24 նախարարական հրամանագրերով, յանձնախումբ մը կազմուած է թիֆլիս դատական եւ վարչական բարձրագոյն պաշտօնեաներէն:

«Ոճրագործութեանց թիւր շատ աւելցած էր թիֆլիսի Պորչալինսք գաւառակին թաթար բնակիչներուն մէջ, ուր եօթը աւագակ կը պատսպարուէին, եօթն ալ բանտէ փախած կամ զանազան սճիրներով ամբաստանուած ոճրագործներ: Քննութիւն մը հրամայեցի այդ գաւառակին մէջ, եւ տեսնուեցաւ թէ գաւառակին զլիւստը պաշտօնակալը, սահմանապահ զինուորները եւ ոստիկանները կատարելապէս անհոգ էին ու կը զեղծանէին իրենց ունեցած իշխանութիւնը: Ժողովուրդը մեծ իրաբանցման մէջ էր, եւ բարձր գասակարգի մահմետականները, սրոնք այդ աւագակներուն զլիւստը օժանդակները եւ թելադիչներն են, անպատիժ կերպով կը պաշտպանէին եւ կը պատսպարէին զանոնք: Անմիջապէս պաշտօնանկ ըրի զլիւստը պաշտօնակա-

ը, ինչպէս նաեւ սահմանապահ զօրքերուն հրամանատարը՝ իր մարդերուն անյարմարութեանը եւ ապիկարութեանը պատճառաւ: Յետոյ սրտորդ-զինուորները զրկեցի հոն զանազան գունդերէ: (Այս սրտորդ-զինուորները իւրաքանչիւր գունդի էն աղէկ նշան առնող զինուորներն են եւրէի որսի մէջ): Յետոյ, աւազակներուն արբանեակները արտօրեցի կայսրութեան ներքին նահանգները, եւ ուս զեղացիներուն արտօնութիւն տուի Հին Պերտան հրացանները գնել՝ իրենքզիրենք պաշտպանելու համար:

«Երբեանի նահանգին մէջ, անցեալ տարուան օգոստոսէն մինչեւ հոկտեմբեր, քանի քանի անգամ թիւրք Քիւրտեր սահմանազրկէն անցնելով՝ արջառներ բռնեցին տարին եւ զանազան ուրիշ աւերներ գործեցին: Այս արշաւանքներէն մէկուն միջոցին, տեղական ոստիկանութեանէն հայածուած առեւտրին, այդ Քիւրտերէն մին սպաննեց Էջմիածնի ոստիկանական քննիչը: Երբեանի զօրքերուն թիւը աւելցնելէ զատ, զիմեցի Կ. Պոլիս Պ. Չինովիէվի, ինչորեւիտ որ գործը օսմանեան կառավարութեան տուի գնէ եւ պահանջէ որ կտրուի հրամաններ զրկուին սահմանազրկի թիւրք իշխանութեանց՝ այսուհետեւ աւելի աշաւորչ հսկողութիւն ի գործ գնելու Քիւրտերուն վրայ եւ մեր սահմանազրկէն աստիճանն օ եւ է նոր արշաւանք արդիւելու: Անցեալ ամառ աւազակութեան յանկարծական աճում մը տեսնուեցաւ Էջմիածնի մարտի նահանգին մէջ, ուր աւազակները եւ բանտէ փախած ոճրագործները մինչեւ այն ատեն կը շատանային անհատներու վրայ յարձակելով, եւ զղուշանալով իշխանութեան ներկայացուցիչներուն հետ կուսի բռնուելէ, բացի եթէ հարկադրուած ըլլային ատոր: Հիւս կանոնաւոր ճակատամարտներ կ'ուսնային ոստիկանութեան հետ, եւ իրենց սովորական անգթութիւնը ի գործ կը գնէին: Աւազակութեան այս աճումը կը բացատրուէր տեղական վարչական պաշտօնեաներուն վարժունքովը, որոնք սա տեսութիւնը ընդունած էին թէ աւազակութիւնը բնիկ ժողովուրդին հիմնական յատկանիշներէն մին էր, եւ ատոր դէմ վճարական միջոցներ ձեռք առնելու չէր, որոնք վտանգաւոր էին գործադիր պաշտօնեաներուն համար: Անօգուտ կը համարէին աւազակները հալածել, կամ զանոնք պահպանելու նեղել: Նոյն խոկ տեսակ մը համաձայնութիւն գոյացած էր ոստիկանութեան եւ աւազակներուն միջեւ, որով աւազակները կը խոտանային խաղաղօրէն ապրիլ իրենց գիւղերը, և սուրհանդակը կամ ճամբորդող պաշտօնեաները չթալելու: Պարզապէս կը զոհանային արջառ գողնալով: Ոստիկանութիւնն ալ, միւս կողմէն, հաւանած էր աւազակները չնեղելու սրտեալ սահմաններէ անդին:

«Նոր կառավարիչ մը անուանուեցաւ նահանգին համար, եւ իրեն խստիւ պատուիրուեցաւ օրէնքը ամբողջովին ի գործ գնել, ժողովուրդը սարսափէ եւ կործանումէ ազատելու համար: Հակառակ յուսահատական զիմարտութեան, մէկ քանի նշանաւոր աւազակապեաներ սպաննուեցան: Քաղաքսիի զաւառակը կուսի մը մէջ, ոստիկանական քննիչ մը, իր քարաուղարը եւ Չէմսքի (զիւզական)

ոստիկանութեանէն ձիաւոր մը սպաննուեցան, եւ իրենց զիւզակները զխստուեցան ու աղարտուեցան: Այս գործին մէջ մատ ունեցող զիւզակները աւազակները սպաննուեցան, միւսները բռնուեցան եւ դատուեցան զինուորականատեանի առջեւ, որ անոնցմէ երկուքը մահուան դատապարտեց և երեքը տաժանակիր աշխատութեան: Այս վճիռները վաւերացուցի, եւ գործադրել տուի:»

Կալիցին իշխանը յետոյ շատ աննպաստ կը խօսի ներկայ Չէմսքիին, կամ զիւզական ոստիկանութեան մասին, որ ապիկար և ապականուած մարմին մըն է, թուով անբաւական, և բարոյապէս անկարող կոուելու աւազակներուն դէմ, որոնք յաճախ ի փախուստ կը դարձնեն զանոնք՝ ճակատամարտը հազիւ թէ սկսած: Այդ ոստիկաններէն ուսանքնու գողութիւն կ'ընեն, բռնի գրամ կը կորզեն, ամենաբոյր լարձքի մը փոխարէն՝ աւազակներուն փախուստը կը զիւրացնեն և փախստական ոճրագործներուն շահատակութեանցը մէջ մատ ունին: Տեղացի ժողովուրդին հետ ընտանեկան կապերով կապուած ըլլալով, կարելի չէ բնաւ իրենց վրայ վրտաւորութիւն ունենալ: Հետեւաբար ընդհանուր կառավարիչը կ'առաջարկէ բարեկարգել եւ աւելցնել այդ մարմինը, նոր ոստիկաններ առնելով՝ կարելի եղածին չափ մեծ մասամբ՝ Ռուսերէ, եւ մասնաւորապէս թուրքներէն աւելցնելով: Հիւս մակ պարզ զիւզական ոստիկանները տարին միջին հաշուով 167 բուպլի կը ստանան, կամ 17 անդլ. ոսկի 15 շիլին, բացի բնակութենէ: Այդ գումարը աստիճանաբար կը բարձրանայ պաշտօնին և ծառայութեան տեսչութեանը համաձայն, մինչեւ բարձրագոյն թուրքի, 50 ոսկի, որ քննիչին առածն է: Պէտք է որ քննիչները ստանան տարին 2600 բուպլի, կամ 276 ոսկի, եւ պէտք է որ բանակին մէջ սպայ եղած ըլլան: Ոստիկանները իբր 300 բուպլի ստանալու են, և ձիաւոր ոստիկանները 400 ական բուպլի բացէն ստանալու են ձիուն սնունդին համար: Գոյաքներուն պէս, ոստիկանները պէտք է իրենք հոգան իրենց համազրկեստը, ձին, թամբը, հատու զէնքերը. կառավարութիւնը պէտք է հայթայթէ միայն հրացանները: Ամբողջ մարմինն թիւր 3170 էն 5551 բարձրացնելու է, եւ տարեկան ծախքը 2,387,540 բուպլի պիտի ըլլայ, փոխանակ 1,812,020 բուպլի:

Ծախքի այս յաւելումը աննշան է բաղադրամար ձեռք բերուելիք առաւելութեանց:

«Տեղացի ժողովուրդը այնքան ահաբեկած է որ, աւազակներուն եւ զօրքերուն ճակատամարտներուն մէջ, բնականաբար ուժեղագունին կողմը կը բռնէ երկիւղէն, եւ ասիկա կը խախտէ իրենց վստահութիւնը՝ ոճրագործ տարրին վրայ օրինական իշխանութեան զերազանցութեան տարբար ստիպուած են վերջ մը գնելու իրաց այս վիճակին:»

Չարին կարծիքն ալ ատ է, և լուսանցքին մէջ կը գրէ. «Անշուշտ:»

Կալիկասի խաղաղացումէն կախում ունի նաեւ երկրին անտեսական բարեկեցութիւնը, որ կը սպասէ գրավազիւն եւ ձեռնբեցութեան զալուստին թէ՛ երկրագործ

ծութեան եւ թէ՛ ճարտարագործութեան մէջ: «Կեանքի՛ն, ինչքի կատարեալ անապահաւորութեան արդի վիճակին մէջ, աշխատութեան, գիտութեան եւ դրամողիւի կիրարկումը կորուստի վտանգէ՛ զերծ չէ:»

Անդրկովկասի պետական ելումուտքին հետեւեալ ցանկը ցոյց կուտայ երկրին աստիճանական զարգացումը, հակառակ վերոյիշեալ աննպաստ հանգամանքներուն.

	Րուպլի	Րուպլի
1884	Հասոյթ 9,790,262	Ծախք 48,506,731
1894	» 38,859,771	» 52,441,985
1896	» 50,183,740	» 61,596,646

Կալիցին իշխանը յետոյ կը խնդրէ կեդրոնական կառավարութենէն արգիլել հրազեններու մուտքը Անդրկովկաս մասնաւոր գործարաններէ, բացի եթէ մասնաւոր արտոնութիւն ստացուի իշխանութիւններէն իւրաքանչիւր պարզայի մէջ զատ զատ:

1896ին Պաքուի ոստիկանութիւնը և մարտային պաշտօնեաները շոգենաւային եւ փոխպրութեան ընկերութեանց մթերանոցներուն մէջ մեծ քանակութեամբ հըրացան ու ռազմամթերք գտան: Նոյնպէս թիֆլիս ու Պաթում գաղտնի զէնք մտցնելու փորձեր երեւան ելան: Այդ զէնքերը թիւրքիոյ հայ ապստամբներուն համար էին հաւանօրէն. բայց ատոնցմէ մաս մը Անդրկովկաս կը մնային, եւ աւազակները զանոնք կը գնէին շատ սուղ գնով: Հետեւաբար զէնքի ապօրէն սեփականութեան համար պատիժը ծանրացնելու է, եւ խստիւ արգիլելու է զէնքերնին ետ դարձնել օրինազանցներուն:

Կալիցին իշխանին խնդրած մէկ ուրիշ արմատական անօրինութիւնն է աւելի խիստ հսկողութիւն մը Սիպերիա դրկուած աքսորեալներուն եւ յանցաւորներուն վրայ, որովհետեւ Սիպերիայէն փախչելու մեծ դիւրութիւնը պատիժը պարզապէս անուանական կը դարձնէ: Կովկասի մէջ աւազակութիւնը մեծապէս պիտի տկարանար եթէ Սիպերիոյ մէջ աքսորեալները այնպիսի հանգամանքներու մէջ գրուէին որ չկարենային փախչել: Հետեւաբար, սիպերական աքսորի դրութեան բարւոքումը եւ անոր տեղ պատիժի ուրիշ եղանակի մը հաստատումը ստիպողական հարկ մըն է:

Պէտք է նկատել նաեւ որ այդ փոխտական եղեռնագործներէն շատը պարսկական ազգայնութեան անցազիր ունին, որով կարող կ'ըլլան ազատօրէն երթալ գալ Անդրկովկասի մէջ, մինչեւ որ նոյնութիւննին երեւան ելլէ: Բնդհանուր կառավարիչը կը խոստանայ նոր ճննութիւն մը կատարել հարկ եղած տեղը՝ պարօսի անցազիրներու այս զեղծումին նկատմամբ, եւ ատոր վերջ մը գնել տալ:

Կալիցին իշխանը նորէն ստիպողաբար կը խնդրէ կայսրէն ընդունիլ առաջարկուած ոստիկանական բարե-նորոգման ծրագիրը: Չարը կը պատասխանէ հետեւեալ ծանօթութեամբ լուսանցքին մէջ. «Լրջօրէն քննեցէք խնդիրը եւ զրական որոշում մը ներկայացուցէք ինծի:»

Այս շահեկան տեղեկագիրը կ'աւարտի վերջաբանով մը, որուն մէջ ցոյց տրուած են կովկասի ուսուցչական տարներուն համար անհրաժեշտ եղած յատկութիւններն ու նկարագիրը: «Պէտք է որ զրացի տսիական պետութեանց սլաշտօնատարներուն մակարդակէն շատ բարձր ըլլան» եւ «օրէնքը ի գործ գնեն ամէնուն՝ առանց կողմնակալութեան, առանց ցեղի եւ ծագումի խտրութեան:»

(Թայլոց)

Վ Ե Ր Չ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Լոնտոն, 27 մայիս

Յիշատակարանը 76 ի սերտեղիկն. — Կաշկանդուստ տաղանդ մը. — Անտոնուայիկն:

Պոլսէն Միացեալ-Ընկերութիւններու վերջնական բայթայումը կը գումնէ: Թէեւ երկար ատենէ ի վեր այդ դժբաղդութեան կը սպասուէր, և սակայն տիւուր յուրը մեզի դառնացուց: Սիրելիի մը որ կը հիւժի կը հիւժի, կեանքէն իրենները թէեւ շատոնց յուսահատ ըլլան, բայց թաղումի վայրկեանին չն՛ի իշար:

Ամէն մահ արժնցուցած յիշատակներովն է որ սրտերը կը խոցոտէ. հիմակ այդ զագաղին շուրջը իր բառորդ դարու մը կեանքը կը յիշէ ու կը տխրի այն 1876ի սերունդը որուն սահմանած էր պատմութեան քնական ընթացքը զրականապէս խորհիլ եւ աշխատիլ Հայաստանի ապագային:

Պերլինէն երկու տարի առաջ, 1876ի սկիզբները, Պոլսոյ Օրթագեղ թաղը քանի մը երիտասարդ կը հիմնէին Արարատեան ընկերութիւնը որ երեք տարուան մէջ Վասպուրականի գեղերը նախակրթարաններ հիմնեց, ու Վան վարժապետանոց մը, եւ իր շրջանակին մէջ առաւ Տէրսիմը ուր Չարսանճախ, Բերրի, Խուփս, Չուլիաճագ կը բացուէին Արարատեան վարժարանները, որոնց իր դրամը կը շուսէր կովկաս «Մշակ»ի միջնորդութեամբ: Մեծնոյն ատենները նոր ընթացաւարտ քանի մը պատանի նոյն Օրթագեղ թաղը կը հիմնէին Արեւելեան ընկերութիւնը որ շուտով կը միանար Դպրոցասիրացին, տարիներ առաջ Կալաթա-Սէրայի Լիսէին մէջ հայ աշակերտներու հիմնած ընկերութեանը. ու այդ միացումով Մուշէն Աւաշկերտ զիւրական և կեդրոնական վարժարաններ կը բոլիւին: Կիլիկեանը 1879ին Ներսէս պատրիարքի հովանաւորութեամբ խանգավառ եռանդով կ'ընդգրկէր Կիլիկիան: Հանրային բաղձանքը, մանաւանդ կովկասէն, այս երեք ընկերութիւններուն միացումին կը ցանկար. 1880 յունիս 1ի կիրակին հիմակուան կեդրոնական վարժարանի սրահին

մէջ Տքթ. Ռափայէլեանի նախագահութեամբ միութիւնը
կը հռչակուէր: Ու տասնընէր տարի ետքը ուրիշ բժիշկ
մը, Ռափայէլեանի բարեկամը, Արարատեան ընկերու-
թեան 1878ի հանգէսին նախագահը, Ստեփան փաշա
Արսլանեան, իր ձեռքովը հողը կը քնէ վերջին նշխարը-
նեքը այդ մարմին:

Եւ հիմա հարցում մըն ալ չընենք ուրիշ սիրելիներու:
Ո՛ր է Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւնը որ Հայաս-
տանի հայ աղջիկներուն դաստիարակութեան հողը կը
ստանձնէր, ո՛ր Դպրոցասէր Տիկնանցը որ վարժուհիներ
կը պատրաստէր. ո՛ր ամէն անոնք որ Պերլինի վեհաժո-
ղովէն ետքը « աշխատինք, գործենք » նշանաբանով կ'ամ-
բաստէին Հայութեան սիրտը:

Անոնք որ այդ օրերուն վկաները չեղան, անոնք չեն
կրնար մեր արժանութեան խորութիւնը ըմբռնել: Անոնք որ
1876էն 1882 Պոլսոյ հայկական կեանքը իրենց աչքե-
րովը չեն տեսած, անոնք անկարելի է որ կարենան պա-
ղափար մը կազմել խանդին, հաւատքին, ոգեւորութեան
որ թեւեր կուտար Հայութեան: « Հայաստանի Սովետաց
Կեդրոնական Ֆանձնաժողովը » ամբողջ Հայութեան
սիրտը Հայաստան կը դարձնէր: Ազգային ժողովը,
հարստահարութիւններու քննիչ, բարեկարգութիւննե-
րու ծրագիրներ պատրաստող յանձնաժողովներ կ'ընա-
րէր, կը լուծէր: Դեռ « փափուկ խնդիր » բացատրութիւնը
չէր ստեղծուած հայկական խնդիրը նշանակելու հա-
մար: Երեսփոխանները պատրիարքին հարցում կ'ուղ-
ղէին թէ — Անգլիոյ կառավարութիւնը ինչո՞ւ Քիւրտիս-
տանի հիւպատոս անունով կը ճանչնայ Հայաստանի
անգլիական հիւպատոսները: — Հայաստանի կուտակալ
նշանակուած փաշաները պատրիարքարան կուգային իրենց
պաշտօնին համար Ներսէս պատրիարքէն հրահանգներ
խնդրելու, եւ իր պաշտպանութիւնը հայցելու: Ֆանձնա-
ժողովներ ճամբայ կ'ելլէին Պոլսէն հայկական նահանգնե-
րուն վիճակը քննելու, եւ պատրիարքարանը անոնց վրայ
հսկիչներ կը կարգէր: Սատրագամ Խայրէտտին փաշայի
հետ Ներսէս պատրիարք յըջօրէն կը բանակցէր Հայաս-
տանը Արեւելեան Բուսնի կազմակերպութեամբ օժանդակ
լիբանանի կուտակալ Բիւթլիմ փաշան վանի կուտակալ
ընելու համար համաձայնութիւն կը գոյանար մեծ պե-
տութիւններու միջեւ: Հիմնական բարեկարգութիւններու
համար միաբան ծանուցագրով մը Դրան ծրագիր մը կը
ներկայացնէին վեց պետութիւնները: Յեղափոխութիւն մը
կը պատրաստուէր վանը ուսական հովանաւորութեամբ
ինքնավար հռչակելու: Ազգային Ժողովին « Ճերմակ տետ-
րակ » մը կը ներկայացուէր իրր տարեկան տեղեկագիր,
ու Պոլիս Արամեան տպարանէն կարմիր տետրակներ ի-
րարու կը յաջորդէին, պատրիարքարանէն խմբագրուած,
Հայաստանի օրուան հարստահարութիւններուն տեղեկա-
գիրներ: Ներսէս պատրիարք ճարպիկ զիւանագիտութեամբ
կը շոյէր, կը փայփայէր, կը սպանար, կը գործածէր
ազգն ալ, Եւրոպան ալ, սուլթանն ալ, Դուռն ալ: Զէյ-
թունի Պապիկ իշխանին անունը ամենուն բերանն էր.

Էրզրում առաջին հայ յեղափոխականները « յանուն Ա-
մինասուր Երրորդութեան » թուղթ մը կը ստորագրէին
յեղափոխութիւն հանելու համար, ու բերդազգելութեան
կը դատապարտուէին: Ռուսիոյ Հայերը Թիւրքիոյ Հայոց
մէջ անսահման ժողովրդականութիւն կը վայելէին: Ու
Պոլիս կը պարէր. կը պարէր ձմեռը, կը պարէր ամառը,
ու խրախճանքներու հասոյթները կը հոսէին Հայաստա-
նի դպրոցները: Եւ հայ ժողովուրդը, Պոլիս խանութ-
պան ու համալ ճանչցուած, հիմա սալոնի նրբացած
ժողովուրդ մը կը համարուէր, ու հայկական պարահան-
դէսներու ներկայ գտնուիլը շիք նորոյթն էր Պոլսոյ երու-
պական աշխարհին: Այն Պանք Օթոմանը որ հիմա Հա-
յոց արիւնը կը խմէ, իր աշակցութիւնը կը նուիրէր պա-
րահանդէսներուն, հայ ժողովրդին բարգաւաճումը նպաս-
տաստելու նախանձախնդրութեամբ. այն դեսպանները որ
օր մը Պոլսոյ փողոցները հայ զիւկներով ծածկելու թույլ-
տուութիւնը պիտի ընէին սուլթանին, ան ատեն իրենց
հովանին կը տարածէին հայ կրթութեան վրայ. սատրա-
գանները մրցակից կը հանդիսանային զեսպաններուն, ու
ինքն սուլթանը պաշտպան կը դառնար Ազգանուէր Հայուհե-
աց սրուն պարահանդէսներուն հովանաւորը կ'ըլլար: Օ՛,
քսան տարի ետքը ի՞նչ բազմապատիւններով պիտի ալ-
ջին մեր հիմակուան նորածիլ երիտասարդները, քսանե-
րորդ դարու քրոնիկագիրները:

* * *

1881 էն ետքը հայկական պարահանդէսը զրթթէ
նոյնացաւ Ազարեան անունին հետ: Մշտամնաց գանձա-
պետն էր « ամերիկացին », Ազարեան Ժօզէֆը, հազիւ
հայերէն հասկցող բայց եւրոպական շրջանակներու մէջ
շատ ծանօթ: Ա՛յ ամէն տարի ձմեռը Բէրլէմպէ—Բազարի
գրասենեակը Միացեալին մէկ մասնաճիւղը կը դառնար:
Հիմակ երբ Ժօզէֆէն յետոյ պատրիարքին ալ մահուանը
լուրը առի, գանձապետին պատկերն էր որ էն առաջ յի-
շողութեանն ներկայացաւ: Այդ պատկերէն կը բղբէին
ժողովրդականութեան լոյսի նշաններ եւ կ'երկարէին զէպի
պատրիարքը:

Ո՛րքան կ'ըզձար Ազարեան պատրիարք ժողովրդակա-
նութեան, սրուն կարօտովը մնաց միշտ: Ներսէսի նման,
Իզմիրլեանի նման ինքն ալ ընդհանուր Հայութեան բա-
րոյական պատրիարքն ըլլալ կ'երազէր, առանց լուսաւոր-
չականի, կաթողիկի, աւետարանականի խտրութեան: Ու
ժողովրդականութիւնը իրմէն միշտ հեռու փախաւ, վասն
զի ընդհանուր Հայութեան շահերը ուզեց ստորագասել
Հայութեան մէկ գանգուածին շահերուն, ու անոնք ալ
սրբան սխալ ըմբռնուած:

Ազգատեանց սակայն: Զեմ կարծեր: Մասնութեան
նեղ շրջանակի մը մէջ միայն իր միտքը կրնար հանգը-
տօրէն պտրագրուիլ, ինչպէս միտքն ամէն անոնք որ սահ-
մանափակ, բայց պատասխանատուութիւններով լեցուն
պաշտօնի մը գլուխ են, ու յանգնութեան մեծութենէն

զուրկ: Անանկները չեն պղտիկնար, բայց չեն ալ մեծնար: Ազարեան պատրիարք, իբր հոգեւոր պետ հայ կաթողիկէներու, կը նմանէր լուսաւորչական հայ եպիսկոպոսին որ ապշած կը մնար երբ իրեն դէմ զայրոյթ կը պայթէր, վասն զի սուլթանին ուղղած էր երախտադիտական ուղերձ մը որուն մէջ իր թեմին ժողովրդին երջանկութիւնը կը հսկուերգէր:

— Ճանըմ, ինէ ի՛նչ կ'ուզէք, ես որո՞ւ ի՛նչ գէշութիւն բրի: Նայեցէք իմ ժողովրդիս մէկուն քթին կաթիլ մը արին եկա՞ւ. ամենքն ալ ինծի շնորհակալ են. բայց ի՛նչ կ'ուզէք, դո՞ւք նե՛ձի:

— Բայց ընդհանուր ա՞զգը, որբազան, ընդհանուր ազգին շահե՞րը:

— Ատանկ մեծ բաներու խելքս չի հասնիր, կը պատասխանէր: Ես իմ ժողովուրդս գիտեմ. ամէն հովիւ իր ոչխարը կը մտածայ: Իմ ժողովուրդս կուտորած է, թալանէ պահպանեցի, իմ գործս աս էր:

Այս եպիսկոպոսին պէս չէր մտածեր եւ Ազարեան պատրիարք ալ. «Ես իմ հօտս գիտեմ, ի՛նչ ընեմ ուրիշը. իմիններու բարեխաւութեանը մտածեմ, ձեռք կուտայ:» Եւ առեւտրական գաղափար մը որ գուցէ ողջամիտ երեւի, բայց այն ողջամիտ գաղափարներէն որ անհասանելի էր, ազգերու ալ ապագան կը խորտակեն, խաթունիկ կեանք մը երջանկութեան վերջին խօսքը համարելով:

Այդ «ողջամիտ» գաղափարներովը սողորուած՝ Ազարեան պատրիարք 1894ին ալ, 1895ին ալ միայն «Իրենները» մտածաց, բայց իրենները աւելի բարձրերէն կը պիտէին իրենց բոլորտիքը. անոնց աչքը հեռուն, հեռուն կը նայէր, վասն զի որտի աչքն էր: Ազգութեան դէմ չէր թրքական հալածանքը. Հայ չէին իրենց այդ կաթողիկէները. «Մենք հայ չենք, մենք կաթողիկէ ենք» ազգութեան վայնասունովը փրկուէին: Եւ ահա յեղափոխական պրօշակը ուղեցին Ազարեանի դէմ բարձրացնել:

Հնաւանդ սովորութեան համեմատ Լուսաւորչի սօնին, 1895ի ամառը, Ազարեան պատրիարք Օրթագեղի Ս. Լուսաւորչի ժամը պիտի դաճուէր. բորբոքուած հայ-կաթողիկէ երիտասարդութիւնը պատրաստուեցաւ սուլումով ընդունիլ այն պատրիարքը զոր իզմիրեան չէր ուզած ընդունիլ, վասն զի Ազարեան չէր վարանած հեքքէ Հայաստանի տառապանքները, սուլթանին իր հաճոյակատարութեանը իբր փոխարինութիւն կաթողիկէ հայերուն շահերը ապահովելով: Ազգապղծութիւն մը համարուեցաւ Լուսաւորչի սօնին, Լուսաւորչի անուան նուիրուած եկեղեցիին մէջ, Ազարեանի ներկայութիւնը: Մտերմաբար Ազարեանին իմաց տրուեցաւ Օրթագեղի ժողովրդին տրամադրութիւնը. զլիսուն զարկածի պէս մնաց: Անգունդ մը կ'անջրպետէ եղեր զինքը իր ժողովրդին սրտէն ու մաքէն, եւ ինքը չէր տեսած լայնափեռնի վիճը: Ազարեան պատրիարք այդ մեծահանգէլ սօրը չհամարձակեցաւ գալ Օրթագեղի եկեղեցին: Հոն ուրիշ պատարագ մը բիշ ետքը հայ-կաթողիկէներու սրտերը Հայաստան սրացուց, — Սասունի

աւ լալ

հոգեհանգստի պատարագը: Ազգային սարսուռի օրերը: Միայն յեղափոխականները չէին յեղափոխական:

Օր մըն ալ սակայն Ազարեան Պատրիարք սթափեցաւ. թերեւս քաղաքական միջավայրերէ կը սեղեկանար թէ հայկական խնդիրը եւրոպական դահլիճներու մէջ լըջօրէն կ'ստուգուէրուի. պատրաստուեցաւ իզմիրեանի եթէ ոչ ճամբէն քալլափոխել, գտնէ արահետներէն քերել, միտքը պրաւ մօտենալ Գում-Գարուի պատրիարքարանին, նախնական պատրաստութիւնները տեսնուած էին, երբ անընդամենը պարագաներ իրարու ետեւէ եկան: ու յետոյ իզմիրեան հրաժարեցաւ, եւ պատահարները անորոշ պայմաններով յետաձգեցին հայկական խնդրին կարգադրութիւնը: Ազարեան ինքզինքը գտաւ, մեծ վտանգէ մը ազատուած էր, ի՛նչ պիտի ըլլար եթէ քանի մը քալլ աւելի առաջ գացած ըլլար:

Ժողովրդական պատրիարքի մը գործակցելու այս փորձը Ազարեանին կողմէն առաջինը չէր. Ներսէսի օրովն ալ Ազարեան պահ մը մտաբերեց անոր աշխատակից ըլլալ: Ներսէս անկողինը հիւանդ պառկած էր Խասգեղ, երբ օր մը իրեն իմացուցին թէ կաթողիկէ վարդապետ մը զինքը տեսնելու եկեր է. բովը հրամայուցին. ահա հիւանդը իր բարձին մօտ Ազարեանը կը տեսնէր: Եկած էր Հայոց պատրիարքին առողջութեանը անձամբ տեղեկանալու, եւ առիթէն օշտուելով խնդրելու իր քաղաքական խորհուրդները, որպէս զի Դրան առջեւ Հայոց պատրիարքին ընթացքէն տարբեր ուղղութեան մը չհեռուի: Ետքէն: Աս ալ անցաւ գնաց:

Իր ազնիւ ներշնչումներէն շատը Ազարեան թերեւս պարտական է ժողովրդական գառնալու ցանկութեան: Օր մը երբ Պ. Մինաս Չերազ Պոլիս ֆրանսական հիւանդանոցը պառկած էր, Գթութեան քոյրերը շատ զարմացան տեսնելով Ազարեան պատրիարքը որ յատկապէս հիւանդին այցելութեան կուգար. այդ օրէն ուրիշ ինամբողջ ուրսան գարմանել իրենց հիւանդը: Լուրը տարածուելով գուրսը լաւ տպաւորութիւն թողուց:

Ու երբ 1890ին բանտը լեցուած էին Հայերը, ոչ ոք Հայոց պատրիարքարանէն կուգար հոգածութեան նշան մը ցոյց տալ. Ազարեան պատրիարքն էր որ կուգար եւ կը ջանար տառապողներուն վիճակը փոքր ինչ բարւոքել մարդասիրական միջամտութեամբ: Քաղաքական շրջանակներու մէջ իր ազգեցութիւնը կը բանեցնէր ընդհանուր մոռացումի մը համար, ու ջանաց որ չորս բանտարկեալ ուրիշներէն առաջ արձակուին: Խոստումը առած էր. այդ արձակումին կը սպասուէր զեկտեմբեր 25ի երկուշաբթին: Զուր սպասում: Վերջի պահուն ուրիշներ հաղորդած էին թէ զեկտեմբեր 25ը կաթողիկէներու Ծնունդին օրն է. ինչո՞ւ լուսաւորչականները այդ օրը ազատին. երկու շաբթի վերջը միւս Ծնունդը կուգար, հայկականը: Ազարեանի մարդասիրութեան օտարոտի չէր բարոյական պզտիկ միջնորդչէքի մը յոյսը:

Ինչ որ ալ ըլլար Ազարեանի պզտիկ հաշիւը, բայց եւ այնպէս իր ցոյց տուած հոգածութիւնը պարտաւորիչ կ'ը-

amnistie

ներ քաղաքաւորական այցելութիւն մը :

Գացի Սպարդ-Աղաճի պաշտօնատունը . անունէս ճանչցաւ ինձի : Առաջին անգամը ըլլալով կը անտէի այդ համբաւուոր անձնաւորութիւնը որուն ջերմ հակառակորդն էի եղած թիֆլիսի ու Պոլսոյ մասուլին մէջ , ու պայքարս նորէն պիտի շարունակէի : Կը գտնուէի հանգեպ մտացի գէմքի մը , լայնատարած մօրուքով մը շրջանակուած . արեւելեան հայրապետի ախար մը որ իր վրայ չեմ գիտեր ինչ մը ունէր պափրանկա . միութեան գիծ մը Արեւելքի ու Արեւմուտքի եկեղեցականներուն միջեւ ժամէ մը աւելի թող չտուաւ որ ելլէի : Խօսակցութիւնը հաճելի էր . բանիբուն , եփած , զարգացած եկեղեցական մը , վերին աստիճանի բարեկիրթ , քաղաքաւոր : Կարծիքներու փոխանակութեան ատեն կը զգայի թէ այդ տաղանդաւոր , լափիչ գործունէութեամբ այրուող պատրիարքին ինչքան նեղ պէտք էր դար միայն սակաւթիւ հայերու հրամանատարութեան պաշտօնը : Սպարապետութեան համար ծնած տաղանդ մը որ սակայն մինչեւ մահը իր ձեռքին աակ ջոկատ մը միայն ունենալու գատապարտուած է : Բոլոր Հայոց կաթողիկոսութիւն ըզձացող , արդեօք շատ ընդարձակ ասպարէզի մը մէջ շարժելու տենչանքն չէ՞ր տառապեր : Ու ո՞վ գիտէ , իր ազգին համար կաթողիկոսութեան մէջ չէ՞ր փնտոեր իրականացումը այն երազներուն որոնք յետոյ այնքան անմեղունակ պարզամտութեամբ պիտի ծրարուէին Հ . Շարմիւնին զրշովը :

Ու զգացի նաեւ թէ ինչքան ինքնամփոփ , գործի մարդ մըն էր , մեր պատրիարքէն շատ տարբեր : Պարագայ մը կրնայ զազափար տալ երկու պատրիարքներուն իրենց պաշտօնին պարտականութիւնները ըմբռնելու մտածութեան մասին : Աղաբեան պատրիարք արտասահմանի հայ թերթերուն վրայ խօսեցաւ . ինչ որ հրատարակուէր ամենքըն ալ կը ստանար , կը կարդար : « Ստորադամին յայտարարած եմ , ըսաւ , թէ իբր ժողովրդի մը պետը , ամէն բան իմանալու եմ , գիտնալու եմ , ուստի բոլոր թերթերը պէտք է առնեմ : » Ու անգին մեր Աշրքեանը կը կարծէր թէ զաւարտութիւն մը ըրած պիտի ըլլար եթէ յեղափոխական թերթ մը իր զրասեղանին վրայ զուէր : Տղէտ ապրեցաւ իր շուրջը զարձածներէն . ու ինչքան շարեքներ այդ աղիտութեան հետեանք :

Մարդէն ետքը հաստատութիւնը : Պատրիարքարանը , կամ , ինչպէս խորթ բացատրութեամբ մը կ'անուանեն , « կաթողիկոսարանը » , կ'արդարացնէ այն խօսքը թէ ամէն սուն իր տիրոջը պատկերը կը ցոլացնէ : Մաքուր , կոկիկ պաշտօնատուն մը ուր մարապետները , վարդապետները , ժողովուրդը , պաշտօնեաները կը մանեն , կ'եկեն , կ'երթան , կուզան անտանաձայն , իբր ծանր հիւանդի մը տունը : Խաղաղութեան , հանդարտութեան հաճոյքը կը զգաս :

Ու երբ այդ մաքրափայլ կաթողիկոսարանէն դուրս ելայ , ուրիշ կաթողիկոսարան մը աչքիս առջեւն էր : Հոն օրուան կեանքը՝ վրդովումն է , կոխն է , մերկնայութիւնն է , ձեծուփեան է . հոն ապրելու սլայմանը անհնազանդութիւնն է , ապստամբութիւնն է , խառնակութիւնն է , շփոթ

թութիւնն է . հոն մթնալստը պայթուցիկներով միշտ ծանրաբեռն է : Բայց ա՛ն կը սիրեմ , վասն զի կեանքը հոն է : Հոս նախշուն պարտէզն է , արհեստական դեղեցկութեամբ պծնազարդ , ամէն ինչ չափուած , ձեւուած . հաճոյքը սկուտեղի մը վրայ դրած աչքիդ առջեւ կը բերեն . անսպասելի ունիւն : Գարձի՛ր դարձի՛ր , հոն ետ : Ու մեղկութիւնը՝ հանդարտութեան , խաղաղութեան զաւակ , ամբողջ էութիւնդ կը թուլցնէ , կը քակէ : Անգին անտանն է իր վիթխարի ծառերովը , արուզ թուփերովը . արհեստական բան մը չկայ այն տեղ . օձն ու սոխակը , ալուէնն ու աղանին խառնամառն անտառին բնակիչներն են . բնութիւնը իր ամբողջ մեծութեան մէջն է : Հոն կեանք կայ , ջիղերը սնդագնող կոխ կայ : Օտարազգի ուղեւորները որ էջմիածին կ'իյնան , հոն ամբողջ օդը վայրապ շունչով մը կ'իտարարը կը զգան . ու այդ շունչը որ պատմութեանէ կը բղխի , ապագան կը պատրաստէ :

Ֆրանսացի մը 1896ին էջմիածին այցելելէ ետքը կը գրէր .

« Ուղեւորը չկրնար մոռնալ այս կրօնաւորներուն սէպ գէմքերը . ուրիշ մէկ քանիներ , դեռ շատ երիտասարդ , տարօրինակ դեղեցկութեամբ կը փայլին :

« Ու երբ կը անտես բացը որ կը փայլի բոլոր այս կրօնաւորներուն աչքին մէջ կարելի չէ տարակուսիլ թէ սրբտապին խանդով վսեմ նպատակի մը ետեւ չեն ինկած : Կենսասու գործ մը ընել կ'ուզեն , եւ կ'աշխատին հայկական հին հանճարին վերակենդանութեանը . ու այս գործին կը նուիրեն նախաձեռնութեան , անյողուղի յարատեւութեան ոգին որ այս ցեղին յատկանիչն է :

« Մեծաշուք բան մը կայ այս մարդերու լեզուին մէջ երբ կը խօսին Հայաստանի վրայ , ծանրախոհ շեշտ մը հաւատքի : »

Ու այդ էջմիածինը առանց վեցհարուածեանի մը , առանց փամփուշտի մը , իր վանականի աղօթքներու մըր մտնջներովը ծանր մտահոգութիւններ կը պատճառէ հարիւր քսան միլիոն ժողովրդի մը տիրոջը , վասն զի Գաղափարը ու Հոգին ապաստանած են հոն : Ու անոր համար է որ կովկասի կառավարչապետը խռովայոյզ կը բացադանչէ . « Կաթողիկոսը կը նկատուի ո՛չ միայն իբր հոգեւոր պետ Հայ եկեղեցիին , այլ իբր ցուցադրիչը կամ ներկայացուցիչը Անդրկովկասի եւ դրացի ստիական պետութեանց Հայերուն քաղաքական միացման : » Ի դուր մեղինները կը յամառին այնտեղ թէ այդ օրինակ երազնեւրով արբշիւ չեն իրենք . « Ո՛չ , մենք հայկական անկախութեան զազափարին ետեւէն չենք ինկած , կը յայտարարեն էջմիածնի ուսուցիչները Ֆրանսացի ուղեւորին , անիրականալի , վտանգաւոր ցնորք մը . մեր կաթողիկոսը խաղաղութիւն կը քարոզէ , եւ համաձայնութիւն բոլոր ցեղերուն միջեւ : Ինքն ալ Մոսկուա դնաց իր խաղաղասիրական ատեւութիւններու մասին ապահովելու համար անոր մեր վեհապետն է : Մենք միայն ապրել կ'ուզենք եւ թող թող տան մեզի պահպանել մեր կրօնքը , մեր յիշատակները , մեր աւանդութիւնները : » Ու կաթողիկոսին

այդ բոլոր անկեղծ եւ սրտաբուզի յայտարարութեանց, և ուսուցիչներու, կրօնաւորներու համոզումին, ուսական կառավարութիւնը կը պատասխանէ կալիցին իշխանին անկեղծութիւնը որ վաւերացուցաւ ձարէն: Այո, իրենք անկեղծ են, բայց գիտեն թէ Հոգին ո՛ր կը վարէ զիրենք: Այսպէս կը խորհին ուսական աշխարհավարները որոնք հոգեբաններ են: Անոր համար մենք ալ շատ կը սիրենք Էջմիածինը: Ուրախութեան եւ գոբաղութեան հազարաւոր տարիներու սէրն է այդ. Հայրենիքի ու Հայութեան խտացումն է Էջմիածինը:

Մեր տարաբաղ չայրերն ալ երբ կը հեռանային Հայրենիքէն աչքերնին միշտ ետեւնին կը մնար. ուր որ ալ ըլլային Էջմիածինը կը յիշէին ու կը հառաչէին: Եւ շատ տեղ Էջմիածնի պատկերը աչքի առջեւ պահել կ'ուզէին, չըլլայ թէ «աչքէ հեռու, սրտէ հեռու մնայ»: Հայութեան մայր-օրրանը արծաթէ եւ ոսկիէ մանրանկար շինուած երկիւզած գուրգուրանքով կը պահուէր եկեղեցիները. ու քահանան ամէն կիրակի խորանին վրայէն զայն սրբութեան սկիհին պէս վեր կը բարձրացնէր երբ տխուր զայրոյթի շեշտով «Ազատութիւն եղբարց մերոց գերեւոց»ը կը մխէր տաքցած երկաթի մը պէս ժողովրդին սրտին մէջ:

Մենք այդ յիշատակը հիմա աչքի առջեւ չունինք, բայց միշտ սրտերնուս մէջն է սէրը: Տղէտ թէ ուսեալ, մոլեռանդ թէ ազատամիտ, լուսաւորչական թէ կաթոլիկ կամ աւետարանական, ամենքս ալ մեր հոգիին բոլոր ուժովը կ'ըսենք «թէ մտացայց զքեզ Էջմիածին»:

ՀՐԱՋԴԱՆ

Խ Ա Ղ Ա Ղ Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ժ Ո Ղ Ո Վ Ը

Արտասահմանի ինչ ինչ տեղերէ Լա Հէյի խաղաղութեան Համաժողովին խրկուած է նաեւ հետեւեալ յիշատակագիրն ալ.

«Մենք... (այսինչ տեղի Հայերը) կը փափաքենք որ մեզի ներուի այս յիշատակագիրը յարգանքով ուղղել եւ ըստական պետութեանց ականաւոր ներկայացուցիչներուն, յայտնելով մեր ջերմագին իղձը թէ այն ազնուահոգի մտածութիւնը եւ առաջադրութիւնը որ այդ Համաժողովին գումարումին պատճառ եղան, կարենան քաղաքակրթութեան նոր թուական մը ողջունել, և արդարութիւնը, խաղաղութիւնը ու բարեացակամութիւնը աշխարհի ազգերուն միջեւ հաստատելու յաջողիլ:

Հայերը, իբր ազգ, խաղաղասէր ժողովուրդ մը եղած են. եւ իրենց քաջած տառապանքներուն պատմութիւնը, մասնաւորապէս այս տասնեկիններորդ դարուս վերջի կիրառն, ու նորագոյն պատահարները որոնք մեր հայրենիքը նմանը գրեթէ շտեմնուած ողբերգութեան մը թատերաբեմն ըրին, շատ քաջածանօթ են Համաժողովի գումարում

մեծանուն ներկայացուցիչներուն, որով պէտք չկայ մանրամասն նկարագրութեան:

Սակայն գոբաղաբար դառնապէս ճշմարիտ է որ իրենց երկարատեւ տառապանքները անտես մնացած են, եւ ամբողջ թիրաքիոյ վարչական գրութիւնը, բայց մասնաւորապէս հայաբնակ նահանգներունը, անտարակոյս խաղաղութեան վտանգաւոր պիտի ըլլայ ոչ միայն օսման, եւն կայսրութեան բայց նաեւ ընդհանուր Եւրոպայի համար: Մենք միշտ ձեռքերնուս եկածը ըրած ենք որ այդ կայսրութեան մեր հայրենակիցները ետ կեցնենք իրենց քաջած սարսափելի տառապանքներուն դարմանը զէնքի անօգուտ դիմումի մէջ փնտռել, բայց մինչ ճնշումը անսոց վրայ կը շարունակէ, մինչ կոտորածը պարբերաբար տեղի կ'ունենայ, անկարելի է չվախնալ որ դաւադրութիւնները եւ ապստամբութիւնները կրնան պայթիլ: Մեր փափաքն է որ այդ շարիքներուն տեղի չտրուի:

Մեծ պետութիւնները յաճախ զգացուցած են, ու այլ եւ այլ գաշնադիրներու եւ մասնաւորապէս Պերլինի գաշնադրին մէջ դրուած է Հայաստանի համար բարենորոգումներու պէտքը, անհրաժեշտ պայման կեանքի, պատուի եւ ստացուածքի ապահովութեան, իբր մարդկային իրաւունքներուն էն տարրականը. սակայն այդ գաշնադրին սրամարտութիւնները գործադրելու համար բան մը չէ եղած, եւ իրաց կացութիւնը հիմակ աւելի զէջ է քան թէ 1878ին:

Հետեւաբար մենք այս պատեհութենէն կ'օգտուինք խնդրել ձեռնէ որ ձեր բարձր ուշադրութիւնը դարձնէք մեր տարաբաղ երկրին մէջ գործերու արդի վիճակին վրայ, որ ոչ միայն քաղաքակրթութեան համար ցաւալի արատ մըն է, այլ եւ մշտամնաց վտանգ մը եւրոպական խաղաղութեան համար, եւ մենք կը խնդրենք այս վեհաշուք Համաժողովէն նկատողութեան առնել եւ սահմանել այնպիսի միջոցներ որ ապահովեն թիրաքիոյ վարչութեան մէջ գործադրութիւնը այն անհրաժեշտ բարենորոգումներուն որոնք ինչպէս յայտնի է արդէն ստիպողական ճանչցուած են:

Խաղաղութեան եւ մարդկութեան շահուն համար է որ այդ բարենորոգումները կը խնդրենք, եւ կ'աղաչենք Եւրոպական պետութեանց հոգալ պէտք եղած դարմանը ընդզէլ՝ այն երկարատեւ եւ ահեղ շարիքներուն որ Քրիստոսնայ հին ժողովուրդ մը քնաջինջ ընելու վրայ են:»

* * *

Թայմզին կը հեռագրեն Հա Հէյէն.

«Մինաս Չերազ անունով հայ մը, տնօրէն Բարիկ հրատարակուող Լ'Առմէնի թերթին, ջանաց մուտ գտնել Համաժողովը իբր արտօնեալ ներկայացուցիչ Հայոց: Պատը Սթալ չուզեց անիկա ընդունիլ, եւ Համաժողովին բարտուղարը նամակ մը գրեց իրեն եւ ըսաւ թէ ո՛ր եւ է քաղաքական խնդրով պիտի չզբաղի Համաժողովը, ուստի եւ իր յայտարարած պաշտօնին համար ո՛ր եւ է պա-

տասխան պիտի չտրուի: Որոշուեցաւ Լա Հէ միթինկ մը ընել եւ Հայոց համար համակրանք յայտնել. բայց թըր-բական շրջանակներէ եղած գիտողութիւններուն վրայ հոլանտական կառավարութիւնը արգիլեց: Հիմա քաղաքական գործերով զբաղող քանի մը տեղացիներ գործը ձեռք առին, եւ այն առարկութեամբ թէ Հոլանտա ազատ հրկիր մըն է, կը բողոքեն հայկական ցոյցին համար եւ զամ արգիլքին դէմ: Կը մտաբերուի Ամսթերտամ միթինկ մը ընել. ու ասիկ զատ վաղը Երեսփոխանական ժողովին մէջ հարցում պիտի ուղէ Պ. Բնիբերի, որ ծայրայեղ բուրձնական կուսակցութեան կը պատկանի: Եթէ ի նպաստ Հայոց այս ցոյցերը կարեւորութիւն ստանան Պոլիս, սուլթանը կրնայ իր պատուիրակները ետ կանչել:»

* * *

Պ. Մինաս Չերազ Համաժողովին նախագահին յանձնած տեղեկագրին հետեւեալ պատասխանը առած է.

Պարոն.

Ըստ հրամանի խաղաղութեան Համաժողովին վստահական նախագահին, որ ստացած է ձեր վերջին մայիս 24ի նամակը, պատիւ ունիմ ձեզի տեղեկացնել թէ, Համաժողովին խորհրդակցութիւններէն քաղաքական ո՛ր եւ ինչոր գուրս ձգուած ըլլալով, կարելի չէ ձեզի ո՛ր եւ պատասխան տալ ի մասին այն պաշտօնին որ կ'ըսէք թէ ձեզի յանձնուած է Պուլկարիոյ, Երիպատի եւ ուրիշ տեղերու Հայոց կողմէն:

Հաճեցէք ընդունիլ, Պարոն, խորին յարգանքիս հաւատարմը:

(Մտորագրեալ) Ժ. ՎԱՆ ԷՍ
Ընդհանուր քարտուղար
խաղաղութեան Համաժողովին

* * *

Երիտասարդ Թիւրքերուն պեա եւ Մեյվերիի խըմբովը Ահմէտ Քիզապէյ ինքն ալ Լա Հէ գնաց Համաժողովին ներկայացնելու համար իր կուսակցութեան պահանջումները: Տեյլի Նիւզլի թղթակցին հետեւեալ յայտարարութիւնները բրած է. «խաղաղութեան դատին իբր աշխատող մը եկայ հոս: Կը փափաքիմ Համաժողովին ներկայացնել զանգատներն իմ հայրենակիցներուս, առանց կրօնի եւ ցեղի խտրութեան, որոնք էն ահարկու ճնշումին տակ կը հեծնն: Պէտք չկայ երուպական եւ ոչ իսկ մէկ զաշնագիր մը փոփոխելու կամ թրքական մէկ օրէնք մը իսկ ջնջելու: Երիտասարդ Թիւրքերը կը հակառակին այն բռնապետութեան որ օսմանեան կայսրութեան զանազան ցեղերուն միջեւ տժգոհութեան մնայուն պատճառ մըն է, ինչպէս կը հակառակին նաեւ հայկական շարքերուն: Գիտենք որ եթէ օսմանեան կայսրութեան մէջ խաղաղութիւն չտիրէ, խաղաղութիւն չկրնար

ըլլալ Երուպա ալ: Օսմանեան սահմանադրութիւնը երբեք չլնջուեցաւ. միայն սուլթանը իր բժաշահոյքովը զազուցուց զայն ապօրինաբար, հետեւաբար Համաժողովը կատարելապէս իրաւունք ունի մեր խնդրաշիրը ընդունելու:»

Անդլիական թերթին թղթակիցը կը կարծէ որ Քիզապէյի Լա Հէ ներկայութիւնը լուրջ ազդանպի մը կ'ենթարկէ Համաժողովը: Պ. Չերազ Լա Հէյէն մեկնած է արտաքսուածի սուլանալիքի հետեւանքով: Այս պարագային մէջ կառավարութեան վարժունքը սաստկապէս քննադատուած է, մինչեւ նախարարութեան գոյութիւնը վրտանդելու աստիճան: Թիւրքիան փաշա, սուլթանէն օտոցած հրամանին համաձայն, Արտաքին Գործերու նախարարին երթալով Պ. Չերազի արտաքսուած պահանջեց, աւելցնելով որ կ'ամ Պ. Չերազ կը մեկնի Լա Հէյէն, կ'ամ ինքը: Թրքական պատուիրակը պատճառներ ունի յայտարարելու թէ որ իր հեռանալովը Գերմանիոյ պատուիրակին ալ պիտի հեռանար: Հիմա Ահմէտ Քիզապէյ հասնելով, առջի դժուարութիւնը նորէն երեւան կուլայ աւելի ծանր հանգամանքներով: Կ. Պոլսէն լուրերը կը հաղորդեն թէ սուլթանը Ահմէտ Քիզապէյն Հոլանտայէն արտաքսուած պահանջած է:

— Բոլոնիացիներն ալ աչքերնին Լա Հէ կը յատն: Լոնտոնի Բոլոնիական Ընկերութիւնը յիշատակազիր մը հրատարակելով կը յայտարարէ թէ տիեզերական խաղաղութեան հաստատութիւնը անհնարին է մինչեւ որ արարութիւնը չյաղթանակէ, ու Բոլոնիա ազատ եւ անկախ պետութիւններու արիսպագոսին մէջ իր աեղը չչրաւէ: Բոլոնիացիները կը սպանան օգտուիլ մարդասպանութեան նորագոյն զիւտերէն, իրենց նպատակին հասնելու համար, թէև իրենց ազգային նկարագրին կը հակառակի, կ'ըսեն, այսօրինակ միջոցներու գիմելը:

ՀԱՅ ՏԱՌԱՊԱՆՔԷՆ

Տ Է Բ Ը...

Դուքսը, անձամար դեղիկ լոյսերով վիրաւորուած գիշերին մէջ, դանդաղ ու տրտռով անձրեւը քափակցող ջրատու մը կը տեղար անվախձանօրէն՝ ցաւերով ու տեղաւորութեամբ գերագոյրուած Գաղաքիկ տարապալման ու գորտուիկ վրայ: Հրաւորի կտրքեր, ցեխացոյցներով մայրիկ երկայնքը քաշկտոռոտ խեղձառքեանը վրայ, կը սուրայիկ, վայրագօրէն անտարբեր, դեպի նպատակները մուշկիկ վայելքներու:

Գիւնեաւան ներքը հետզհետէ կը ստուարանար խմոր ներքու թիւր, ու ոգիով ծանրաթեւեռուած մրկոյրտիկ մէջ գաւաթներու քաղիսուտի ու խեղդուող պայքումի ձայններուն հետ կը քարձրանայիկ անբեղում հեղափոխ մի-

ժայլենիք մերեկաբար զուարթ «պար—մէյտ» ներսն, ուրսեր իրենց երկյիւմի ու շպարուած ժպիտները կը պարտօցնէին յաճախորդի յաճախորդ:

Ու Գարեգին, խոշ աչս աղմուկիւն, ու իր վերջուշումներուն մէջ տեկոտ, շարունակեց.

Փրկութեան Բանակը ձգելու վերջը, այլանպակ ու արգաւանդ ամիս մը ապրեցայ Լոնտոն, շահահնդիր կարեկցութիւններու, քրիստոնէական կեդիքներու, միստիքական գոհելի կապիութիւններու անարգ ու անբանասցնող միջավայրի մը մէջ: Գերերջանիկ երէցներու, առաւել կամ նուազ վաւերական պատուելիներու, մարգարտութեան շէլ միջնորդներու, հաւատքի ընչաքաղց մանրավաճառներու, ցաւագար ու բարեկեցիկ երիտաւարներու, մօլեւանս ու ցամբաձ կնիկներու — գծրազգ ամուսիններ, ինչպէս հարկաւորաբար բոլոր անգլիացի բարեպաշտուհիները, — կրօնական անըմբերելի յարանուանութեանց խանդավառ ներկայացուցիչներու, — Տիմարութեան անպատու առաքեալներու պիղծ ընկերութեան մը մէջ էի:

Ամբողջ «գործը շտիած» աշխարհը մը հաւատացեալներու — անբան լայնօրէն վարձատրուած իրենց հաւատքին փոխարէն — սրունք իրենց նիւթական ապահովութեանը մէջ հաստատարիտիս, միակ ու արիական մասհողութիւնը կը մասնէին միշտ աւելի ջերմուանդ, միշտ աւելի փառաբանիչ, միշտ աւելի սրբակրօն, միշտ աւելի սրբապօրծ երեւնալու իրարու, — սուրբ մեղսակիցներ, — ու քիչ մըն ալ հարկաւ Անոր որ վերն էր:

— Տէրը...

Տէրոջը տարամբժ ու բոնի յաճախանքն էր ասիկա: Ան, աղբիւրը, ապաւնը, ամէն օրուան հացը, վայելքը, ծոցի կնիկը, հոռիսքին ու ռօտան, պէյքընը ու յօզպիֆը...

— Տէրը...

Իրենց շրթունքն անպակաս, իրենց ամէն մէկ շարժումին ընկերացող, իրենց աժգոյն ու անիմաստ գոյութիւնը կ'ակնարկող յաւիտենական, անխուտափելի բանն էր ասիկա: Ու այս մարդիկը կը շարժէին, կը խօսէին, կ'ուտէին, կը խնջէին, կ'ապրէին Տէրոջը անունովը:

Օ, բողոքական կրօնքի այս խանութպաններուն շարաշահութեան կեանքին ըմբոստացնող, նողկալի խժըրգութիւնը:



Դանէ գուռ գործի մը հետապնդումը, մէկն միւսին յամառ գիմուներու շարք մը զիս հոգ ձգած էին: Լոնտոնի աղնուական արուարձաններէն մէկուն տարուօք ու հանդիսաւոր երէցը զիս այդ սեղ առաջնորդած էր յալթական: Կորուած հոգի մըն էի զոր պէտք էր փրկութեան փարախը բերել, տարազիր Հայ մըն էի որուն խեղճութիւնը պէտք էր ծախել Գիմութեան շքեղ ու սուստաճան սունկերուն:

Ու ամենքը մէկ խուժեցին վրաս, զիս շրջապատեցին իրենց ապուշ հետաքրքրութիւնովը, իրենց քսամների փութիտութիւններովը ու իրենց տինկալող, անօթի ժպտաններովը: Չիս իրենց եղբայրը կ'ընչեցին ու Տէրոջը վերայ խօսեցան ինծի անմիջապէս:

— Տէրը... Տէրը միշտ...

Ու ասիկա սեւեց ամիս մը: Օրն է բուն ու զիշերներն ալ յաճախ Անոր անունը կրկնեցին ինծի, ոտքի վրայ, ծունկի եկած, աչքերնին գոց կամ պիշ, պարապ նայուածքներով:

Անոնցմէ մէկը մանաւանդ զիս կ'ընկճէր իր անտանելի անձին շնչահեղձ տաղաուկովը: Միշտ քսութիւն էր, միշտ խնդրածներս ու միշտ փութիտա՝ ան զիս կը հալածէր շարունակ փրկութեան մոլեղին հրաւերներով ու յորդառատ խօստումներով:

Հաստ ու կաս կարմիր մարդ մըն էր, ճաղաս պիտով ու զիշակերի հուժիւ կ'զակով մը զոր կը ծածկէր կարճ փշացած մօրուք մը: Իր ճարպով փքացած դէմքին վրայ, մանր ու անպոյն աչքերը անիմաստ ու կասկածելի նայուածք մը ունէին որ կը վրդովէր ու կը զայրացներ: Ու իր փորին հակայ սուեցը զգուսխան տարօրինակ ըմբոստացումով մը անհանգուրձելի կ'ընէր իր ներկայութիւնը:

Հակառակ իրմէ խուսափելու իմ բոլոր ճիգերուս, տնիկա կը դանար զիս, կը ժօտնար ինծի ամէն սեղ ու իր մարգարտի պիղծ զարպտը կ'ընէր ինծի:

— Տէրը, Տէրը... պէտք է զանաք Տէրը, սիրելի'ս... պէտք է Անոր երթաք անմիջապէս... հիմա՛, կ'ուզէք, եղբայրս, հիմա՛...

Ու ասիկա օրը քանի մը անպա՛մ:



Իրիկուն մը իր վայրազ աղաչանքներուն տոջե ճաւահատած ստիպուեցայ հետեւիլ իրեն:

«Երիտասարդներու Քրիստոնէական Միութեան» շարժական ժողովքին զացինք միասին: Ինծի ապահոված էր որ բոլորովին փոխուած ու հոգեւին նորոգուած զուրս պիտի ելլէի անկից, թէ պիտի ընդհանարէի հոն Տէրը ու պիտի ուզէի Անոր երթալ անյապազ:

Էկզիտը հօշի սրահներէն մէկուն մէջ, ահազին սեղանի մը շուրջը բոլորուած էին յիսունի շափ երիտասարդներ, անարտայայտ ու որ եւէ զէմքերու ընտրուած հաւաքում մը: Ամենքն ալ մաքուր հագուած, ինամբով ամիլուած ու սանտրուած, պարկեշտութեամբ ու անմեղանակ կութեամբ կոճկուած աղաքներ էին, սրոնց խօսուածքին, շարժումներուն, նայուածքներուն մէջ հաշուուած, կշռուած, գոց սորվուած բան մը կը մասնուէր: Յաւիտենապէս զարմացած ու հիացական, ամէն բանի կը ժպտէին, կսկծուէին տիմարութեան ժպտով մը ուր իրենց ուղեղներուն անհասանելի, ցնորատու պարապը կ'անդնդանար:

Կը ժպտէին իրաւ: Ասիկա կրնար ուրիշ բան մըն ալ ըլլալ: Ու այդ բոլոր մեռած երեսներուն վրաս ձգած աւ...

աշին ու էական տպաւորութիւնը երկզիմութեան խորունկ ու խոռովիչ տպաւորութիւն մըն էր: Թեքեա ա՛լ անկարելի էր իրենց չժպտել, ու պահ մը փորձուեցայ մտածել թէ՛ զիշերը իրենց ճունին անգիտակցութեանը մէջ ալ այդպէս մպտելու էին անոնք... հրեշտակներուն կամ իրենց վերժակներուն:

Կեղծիքը, վատ ու գողահար զգուշաւորութիւնը, անոնց հոգին թունաւորելէ, անոնց պուտ մը խելքը հալեցընելէ վերջ, փակած էր անոնց մորթին, միտերնուն մէջ անցած էր ու աչքերնուն նայուածքը կերած:

Առաջնորդս յաղթական ձայնով մը անոնց ներկայացուց զիս:

— Ահաւաստի Հայ մը, եղբայրնե՛ր, Թիւրքիոյ աղէտքներէն փախած բրիտանիայ մը որ հետո բերի այստեղ, սրպէս զի Տէրը գտնայ...

Խըրատում մը, ու սաքի երան ամենքն ալ. աչքերնին գէպի ձեղճունը վերցուցին ու իրենց կուրծիներ լեցնող, խափանող բառը վազեց շրթունքներնուն վրայ:

— Տէրը, Տէրը, Տէրը...

Յետոյ մօտեցան, շրջապատեցին զիս, կարեկցութեան քանի մը վազնշական խօսքեր թոթովեցին իմ գրգռուող հայրենակիցներու հասցէին, ու անպարտաբող անխուսափելի, ճակատագրական հարցումը ուղղեցին ինձի:

— Իրաւ փրկուած չէք...

— Ո՛չ, պատասխանեցի զլսու արագ շարժումով մը:

Ան ատեն ամենքը մէկ քաշուեցան, իմ անուրբ հըպուստոստիկ գողաւոր, ու լուս անգիտիւնի գոցին նստիլ, պատարաստելով սկսիլ իրենց սովորական պաշտամունքը:

Անասնելի աստճնորդս հսն, քօլս էր միշտ: Ս. Գիրք մը ու Երզարան մը բռնց ձեռքս, ցուցնելով օրուան կարգացուելիք ու երգուելիք էջերը, խնդրեց ինձ որ Չերմեռան պատճառով մտանակցիմ իրենց ու խոտաացաւ որ Տէրը չպիտի ուշանար ինձի յայտնուելու:

Ու կը փսփսար ականջիս շարունակ:

— Հիմա, սիրելի՛ս, հիմա... Օ՛հ, պիտի տեսնէք Տէրը, պիտի Անոր երթաք...

Պահ մը վերջը սկսած էին: Աններկաշնակ ու անճուրի երգ մը կը ճուռային միտերեան, զոր շունչս բռնած կըրեցի բատրոյ ժամ մը:

Երգէն յիսայ, Ս. Գիրքն անվերջ ընթերցումներով ու բռնագրօսիկ մեկնութիւններով ճզակտոր ելան: Նորէն երգ: Ու վերջապէս օրուան խօսելու կարգը սենեցող երիտասարդը, երկիւզած լուսութեան մը մէջ, ոտքի ելաւ. զբրպանէն թուղթերու ծրար մը հանեց ու շինձու ձայնով մը սկսաւ կարգալ իր զժնգակ արձակել:

Զմայլած մտիկ բրին իրեն:

Տէրոջը սպասած կոչ մըն էր ասիկա որուն ակամայ ու վիթխարի կատակերգականութիւնը միս մինակ էի ըմբռնելու: Խեղճ աղան. ինչ բաշեր էր արգեօք այդ սոբալի տքնութիւնը զլուս հանելու համար, ու հիմա ինչ արբշիտ երանութեամբ մը կը հրամցնէր կոր զայն իր ցաւագար եղբայրներուն:

Չինդացի: Գրեթէ մեղքեցայ զինքը, ու իր փողկապը զիտեցի երկարօրէն, իր պոռոտ, շողշողուն փողկապը որ շատ մը տրտում բաներ կ'ընէր ինձի:

Ու անիկա, հետզհետէ աւելի բորբոքած ձայնով մը, կը վերջացնէր հիմա կցկտար, խելայեղ ազազակներով:

— Եկու՛ր, Տէր, եկու՛ր այս սենեակին մէջ... հիմա՛, հիմա՛ եկու՛ր, Տէր... եկու՛ր որ քեզ տեսնանք... քեզ կ'ուզենք, Տէր... ինքզինքնիս քեզի կուտանք... եկու՛ր անմիջապէս, Տէր... եկու՛ր, ալ չենք կրնար կոր սպասել... եկու՛ր, Տէր, եկու՛ր...

Ու տեղը նստաւ: Երեսներն ափերնուն մէջ առած, ամենքն ալ սեղանին շուրջը ծոած էին:

Հինգ վայրկեան լուռ մնացին այդպէս:

Յետոյ անոնցմէ մէկը, ատանց տեղէն շարժելու, ծանր ու համուզուած շեշտով մը, սկսաւ պատմել իր հոգիին անցեալը ու ներկան: Բնաւ թէ ինչպէս Տէրը նորագած, մտքբոս մը զինքը:

— Առաջ կորուսած էի, հիմա փրկուած եմ... առաջ խուարին մէջն էի, հիմա լոյսով սողուած եմ... առաջ խոզ մըն էի, սիզմի ու ազտեղութեանց մէջ կը տապալակէի, հիմա սրբուած եմ... Շնորհակալ եմ քեզի, Տէր... երկընցուր ձեռքդ ինձի, Տէր, սրպէս զի քու ճամբուով մէջ բաւեմ միշտ...

Ուրիշ մը, անզլիտցի գործնական միտք մը, Չերմեռան պարտէն շարունակեց:

— Փառք քեզ, Տէր... անցած շարժու գործերս բաւական աղէկ վացին... բրե՛ւ որ միշտ լաւ ըլլան անոնք, ըրե՛ւ որ քու գաւակներդ աւելի բազաւոր ըլլան եկող շարժու, աւելի յաջող գործեր ընեն, սրպէս զի կարող ըլլան օրհնելու քեզ յախտեան... ամէն...

Ու այսպէս, իրարու ետեւէ, իրաքանչիւրը խօսեցաւ Տէրոջը, զմայլելի ընտանութեամբ մը, իր պզտիկ մաղթանքը ըրաւ Անոր ու յաջող շարժուան համար ժամադրութիւն տուաւ անոր հետ:

Երբ կարգը առաջնորդիս եկաւ, զգացի որ ամենուն ուշադրութիւնը գէպի անոր կը գտնար: Առանց բարբոս վիճ վեր անելու իրենց անխմատ գլուխները, անհամբերութեան մեղմ շարժում մը սրբուաղծեցին: Ու առաջնորդս անոնց հետաքրքրութիւնը աւելի հրահրելու համար ատեն մը լուռ, աչքերը գոց, խորունկ յափշտակութեան կերպարանքով մը սպասելէ վերջ, սկսաւ իր ազօթքը:

— Տէր, Տէր, Տէր... այս իրիկուն մարտեալ մը կայ մեր մէջը... Հայ մըն է, Տէր, եղբայր մըն է մեզաւորներու զորոնք Քու ահով զարկիլ... երեւցի՛ր անոր, Տէր, փրկե՛ զայն, Տէր... Քու փարախդ զարձուր բարբայր այդ ժողովուրդը, սրպէս զի զազրին զայն հարուածող աղէտները, ու վայելեն անոնք, Քու փրկուած գաւակներու պէս, Քու երկնաւոր ու երկրաւոր բարիքներդ... ամէն...

— Ամէն... ամէն... ամէն... կրկնեցին ամենքը, զլուսնին վեր անելով ու աչքերնին վրաս անկելով, կարծես հրաշքի մը սպասումին մէջ անձկոտ:

Աթոռիս վրայ գամուած, վատ, գրեթէ անգիտակից

վիճակի մը մէջ կը մնայի, անբանացած քիչ մը այնքան սխմարութենէն որ զիս ճգմամ, ուզեց թմբեցուցած էր: Բայց խուլ զայրոյթ մը կ'արթննար տակաւ ներսիցիս, ու սենեակին մթնոլորտը, Տէրոջը անունովը յղփացած, ծանրաբեռնուած, կը խեղդէր զիս: Հոս ալ պիտի տեսնայի լղրճուելը մեր նուիրական ցաւերուն, հոս ալ պիտի լսէի, մանաւանդ, քրիստոնէական արդարացումը Հայ Տառապանքին...:

Տէրը... Ան կրնար քնանալ իր յաւիտենական գծնէ բունը, մեր ամենայնի վայնասունէն օրօրուած, ու ինչ ազուր անկողին իրեն համար մեր նահատակ-գիւտինքն անջատուած արիւնոտ հոգիներուն լեռնակուտակ ամպը...:

Շուրջս, ամենքն ալ ոտքի ելան, վերջին երգն էր որ կ'երգէին հիմա, իրենց ճաթած ձայներուն բարձր տափահարի ողբերգութեամբը:

Ալ վերջացած էր: Գլխարկս առի ու ժողովարանէն գուրս նետուեցայ: Հազիւ սանդուխտին վրայ լայն շունչ մը տանք էի, առաջնորդս վազնիվազ հասաւ ետեւս ու ձեռքս սեղմելով, հարցուց ինձի թէ զո՞ւմ էի Տէրը: Ու առանց պատասխանիս սպասելու:

— Անշուշտ, սիրելիս, ըսաւ, անշուշտ գտաք վերջապէս զԱյն... Օհ, բարի Տէրը... դեռ քանի մը օրէն պիտի զգաք Անոր հրաշալի մեծութիւնը, Անոր անսահման զթութիւնը...:

Ու գուրս ելանք միասին Էկեղիշտ հօշն:



Թանձր մասախուղ մը կուրցուցած էր ֆաղաքը:

Գիշերուան այդ պահուն ամայի փողոցներուն մէջ մեռած էր աղմուկը, ու լուսնիւնը որ կը տիրէր հիմա՝ ահանց ցօրեկուան մեծամիտր գործունէութեան յուշածու մովը աւելի խորունկնալ կը թուէր:

Հազիւ քանի մը քայլ հեռաւորութեամբ նշմարելով, կը քալէինք անվերջ, անտես ճամբաներէն: Գրիթէ հաւասար սարածութեամբ միջոցներու, բոլիսակն մը յանկարծ կը ցցուէր դիմացնիս, իր յաղթ, անշարժ զանգուածովը: Ուշացած, սովալլուկ ցնծուհիներ, յոգնած՝ բազմին ետեւէն խարխալելէ շարադորձ մշուշին մէջ, կը պատուէին զայն սեղ տեղ ու կը կառչէին մեզի խոստամնառատ ու պաղատազին, յամառելով քանի մը վայրկեան իրենց վայելքի կսկիծալի կոչերուն մէջ:

— Հոս նայէ՛... բը՛սթ... հոս նայէ՛, անճշտ... հոս նայէ՛...:

Ու առաջնորդս չլոց վայրկեան մը: Ընդհակառակը, միշտ աւելցող, մոլեգնութեան հասնող խանդավառումով մը կը շարունակէր ան կրկնել ինձի Տէրոջը անունը: Իր կեանքը կը պատմէր ինձի, Տէրոջը համար իր դիցազնական կոիւնները կ'ըսէր ինձի, Հայտ Բարբէ մէջ, անիշխանակամներու եւ անաստուածներու դէմ, ու իր կատաղութիւնը կ'արտայայտէր բոունցքի ահեղ հարուածներով

որոնք պարապին մէջ կ'իջնային զահալիժօրէն, մօտենալով, գրեթէ քսուելով երբեք ինձի:

Ու այս բարբէն կ'եզրակացնէր թէ պէտք էի, ես ալ, իր շաւղին հետեւել: Պէտք էի փրկուել ժամ առաջ, պէտք էի Տէրը գտնալ, ու փրկել ապա իմ կորսուած ցեղակիցները...:

Կամաւոր լուսնիւնս չէր վհատեցնէր քնաւ զինքը, ու տունին ճամբան կ'երկննար, կը յաւերժանար:

Երբ Ֆինլանդի սքուէր հասանք, լապտերի մը տակ կանգ առաւ ան մայթին վրայ: Հոն պիտի բաժնուէինք իրարմէ: Ազօտ լոյսին մէջ իր աեսքը զիս քսամեցուց: Աչքերը արիւնոտեր էին ու իր ամբողջ կերպարանքը հրէշային ծամածուծութեան մը մէջ կը կարմրէր:

Սքուէրին մէջ ո՛չ մէկ ձայն կը լսուէր այդ պահուն. մայթին վրայէն ուր կեցեր էինք, ո՛չ մէկը կ'անցնէր: Ու զրեթէ վախ զգացի երբ, հեռանալէ առաջ, այդ գծնակ մարդը իր շիւ, խոնաւ ձեռքերուն մէջ առաւ իմ ձեռքերս ու լալազին սկսաւ համբուրել զանոնք երկարօրէն, հեծկըլտալով, զառանցելով, աղերսելով:

— Եղբայրս, սիրելիս... մի՛ մոռնաք Տէրը... Օհ, այս զիշեր զացէք իրեն... անկողին մտնելէ առաջ զաւր զԱյն... եղբայրս... սիրելիս...:



Յաջորդ օրը հեռացայ Տէրոջը տունէն, հոն ձգելով սակեզօժ Աւետարան մը զոր նոյն առաւուն իսկ թղթատարը բերած էր իմ հասցէիս եւ որուն կողքին ետին առաջնորդս իր անունը գրած էր սա բառերուն տակ. «Տէրոջը զնա»:

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

1898ին վանի անտեսական կացութեան մասին անգլիական գեր-հիւպատոս Պ. Մաունտէ հետեւեալ կերպով կը տեղեկագրէ.

«Ներածութիւնները, 161,600 ոսկի (որուն 151,500 ը արտասահմանէն եւ 10,100ը թիւրքիոյ միւս նահանգներէն) մեծ յաւելում մը ցոյց կուտան 1897ի բազմամամբ, մասնաւորապէս անգլիական ամէն կարգի բաւթակեղները: Ասոր պատճառը այն էր որ ամէն մարդ կը յուսար թէ աւելի մեծ ապահովութեան եւ հետեւաբար աւելի ընդարձակ առուտորի թուական մը սկսելու վրայ էր: Այդ յոյսը անմիջապէս չիրականացաւ. բայց անցեալ ձմեռ տեւող կատարեալ հանդարտութիւնը մեծ մասամբ վերարձարձից վաճառականներուն յոյսերը, եւ հիմակ Եւ-

րոպա զրկուած ապսպրանքները այդ յաւելումը պիտի շարունակեն :

Ապրանքներուն մեծ մասը գրատի վրայ Տրապիզոնէն կուգայ Էրզրումի ճամբով, պղտիկ մաս մըն ալ, զըլխաւորապէս բաժարակիզէն, Հալպէն՝ Տիարպէքիբի եւ Բազէշի ճամբով :

Անգրկովիասէն գրեթէ ո եւ է ապրանք վան չի հասնիր Պայաղիտի ճամբով, գլխաւորապէս այդ կողմերը տիրոջ անապահովութեան պատճառաւ :

1898ին վանի արտաճումներուն գումարն էր 54,050 սակի : Ասոր 40,000 սակին՝ կ. Պոլիս եւ ուրիշ նահանգներ զրկուած այժի, ոչխարի եւ զանազակի արժէքն է :

Պարսկաստանի հետ արջի խոշոր առուտուրը 1898ին բազմապատար պղտիկ գումար մը կը ներկայացնէր. ասոր գլխաւոր պատճառն էր հիւսիսային—արեւմտեան Պարսկաստանի հունձքին գէշութիւնը, եւ միանգամայն սահմանադրին մօտ ճամբաներուն անապահովութիւնը :

Վանի նահանգին բնակչութեան մէկ մեծ մասը Քիւրաքլլալուն, նահանգին հարստութեան գլխաւոր աղբիւրը կը կազմէ ոչխարի, բուրդի եւ թիֆթիբի արտաճումը :

Նահանգին հանքային հարստութիւնը, որ կը կարծուի թէ շատ մեծ է լճին հարստակողմի լեռներուն մէջ, երբեք բնութեամբ չէ. բայց վառելիքի յարաբար պակասութեան պատճառաւ, կը մտադրուի շահագործել Սիվանի անապահովութիւնը որոնք վանի արեւելեան կողմը կը գտնուին, 18 մլոն հեռու, եւ լաւ ճամբայ մը բանալ մինչեւ հոն :

Լճին հիւսիսային արեւելեան անկիւնը Գործօթի քարիւղի աղբիւրները գործածելու հարցն ալ նորէն արծարծուեցաւ : Գարձիւ ախտան խօսիլ լճին վրայ շտապներ բանեցնելու եւ այդպէս Բազէշի եւ Էրզրումի հետ հազարգակցութիւնը զիրարացնելու հին ծրագրին մասին, բայց ո եւ է յոյս չ'երեւնար ասոր իրականացումը տեսնելու ներկայ հանգամանքներուն մէջ :»

Խարբերդի վեր—հիւպատոս Պ. Ճոնս կը տեղեկացրէ :

«1898ին Խարբերդի նահանգին առեւտրական կացութիւնը մեծապէս փաստուեցաւ տարուան առաջին ամիսներուն տիրոջ շտապներէն. հետեւանքը եղաւ հացահատիկներու հունձքի ահագին նուազում մը եւ ցորենի գինին բարձրացումը, որ աւելի ստատկացուց վերջին տարիներուն զէպքերին վարնուած զիւղացիներուն թշուառութիւնը :

Աւելցուցէք ասոր վրայ արջաներու (եզ ու գովէշ) հիւանդութիւն մը որ հարիւրին 60էն աւելին առաւ տարաւ, ընդ ամէնը 10,000 անասուն՝ 30,000 սակի արժէքով : Այժմերը եւ ոչխարները զերծ մնացին այդ հիւանդութենէն, բայց խոշոր անասուններուն կորուստը սաստիկ հարուած մը եղաւ կարօտ զիւղացիներուն համար : 80 գիւղ փաստուեցան այդ համաճարակէն, որ հիմակ կազրած է, թէպէտ անց տեղ նորէն երեսուն եղած էր այն

զիւղերը ուր կը կարծուէր թէ ալ անհետացած էր :

Հայ արհեստաւորները, որոնց ձեռքն են միայն ինչ ինչ արհեստներ, ինչպէս կօշիակարութիւնը, խաղախորզութիւնը եւ զարբնութիւնը, իրենց առջի գիւրքը նորէն ձեռք բերելու վրայ են, եւ զոհութեամբ կը հաստատում թէ, հակառակ աննպաստ հանգամանքներուն, այդ արհեստները բարուրման նշաններ ցոյց կուտային անցեալ տարի :

Երկրագործութիւնն է սակայն խարբերդի եւ Մալաթիայի գաւառներուն բնակիչներուն ապրուստի գլխաւոր աղբիւրը : Ակնայ եւ Արապկիբի բնակիչները միւս նահանգները կ'երթան իրենց ապրուստը ձարելու իբր մշակ եւ արհեստաւոր :

Պտուղի բերքն ալ մեծապէս փաստուեցաւ չորութենէն, եւ զինքը սովորականէն երեք չորս անգամ աւելի էին : Այլիներուն բերքը մասնաւորապէս շատ պակաս էր :

Բարբերպարար, թթենիները բիշ փաստուեցան չորութենէն : Հում մետաքսի բերքը անցեալ տարուան հարիւրին 50 աւելի էր : Խարբերդի բոլոր մետաքսի գործարաններուն անցեալ տարուան ամբողջ արտադրութիւնը 2500 սակի կը հաշուուի :

Բաժարակի հունձքը անցեալ տարուան կրկնապատիկն էր գրեթէ, բայց զինքը շատ ցած էին, այնպէս որ երկրագործները շատ քիչ օգտուեցան հունձքին յաւելումէն : Հում բաժարակը միւս նահանգները (Սըվազ եւ այլն) կը զրկուի գործուելու համար :

Մանսուայի առուտուրին մէջ հարիւրին 25 պակաս գործ եղաւ : Եւրոպական այդ կարգի ապրանքները անգահանին անզը բանելու վրայ են :

Շատ քիչ բաժարակ կը գործուի այս նահանգին մէջ, թէպէտ այս ճարտարագործութեան մէջ ձեռներէցութեան նշան մը կը տեսնուի վերջերս խարբերդ հաստատուած մանարանով մը, որուն մեքենաները Անգլիայէն բերել արուած են :

Մանածի ներածութեան մէջ, Իսապիա սկսած է Անգլիայ հետ մրցել :

Մեծ բարուրում մը կը տեսնուի տեղական կարմիր պամաներու առեւտուրին մէջ, որոնց գունաւորմանը համար Աստրիայէն եւ Ֆրանսայէն բերուած ալիզարին կը գործածուի :

Այժի կաշիի առեւտուրին մէջ ալ մեծ բարուրում կը տեսնուի : — Գովէշի կաշին Հնդկաստանէն եւ Երիտասարդացի կուգայ. առաջ Ռուսիայէն կուգար :

Արտադրուած ամբողջ բուրդը նահանգին մէջ կ'ըսպատի :

Ոստայնանիւթները, որ Արապկիբի եւ Ակն հաստատուած էր՝ այդ քաղքին թշուառներուն աշխատանք հայթայթելու եւ խաղախորզութեանց ատեն կործանած արհեստները վերակենդանացնելու համար, իր առաջադրած զըլխաւոր նպատակին, հասած է. Արապկիբի մէջ սակայն ո եւ է զուս շահ թուցած չէ, թէպէտ բոլոր ծախքերը զոցուած են, մինչպէս Ակն՝ ամբողջ ծախքերը զոցելէ յետոյ :

80 սկիի զուտ շահ մը աւելցած է 1898ին: Յոյս կայ թէ այդ արհեստները, որոնք խարբերդի Ամբրիկեան Գուլճէն Պատ. Տր. կէլյոսի կարող հսկողութեան ներքեւ են զեռ բարերադարար, շատ չանցած շահու աղբիւր մը պիտի ըլլան զուտ առեւտրական տեսակէտով:

Տիարսէլքիի եւ խարբերդի նահանգներուն մէջ 1898 ին Հանրային Պարաքի վարչութեան հասոյթը եղած է 200,862 զրուշ եւ ծախքը 100,480 զրշ: Այս երկու նահանգներուն մէջ 1898ին 5,220,000 օխա աղ սպասած է, 26,000 սկի արժէքով:

Տիարսէլքիի, խարբերդի, Բաղէշի եւ վանի նահանգներուն մէջ Ծխախոտի Ռէժիին զուտ հասոյթը 1897 ին հարիւրին 20 պակաս եղած է: Ընդհանուր հասոյթն է 1,182,892 զրշ եւ ծախքը 886,950 զրշ: Այս նահանգներուն մէջ փախտեայ ծխախոտի բանուկ առուտուր մը կայ, արժէքով Ռէժիի հասոյթին կրկինը, եւ քանակութեամբ՝ Ռէժիի ծախածին քսանապատիկը:

Երկրագործական Պանքային 1898ի հաշիւն է — զիւղացիներուն փոխ արուած 1650 սկի, եւ զիւղացիներէն ետ աճուած 2100 սկի:

Նահանգին հասոյթը եղած է 10,939,000 զրշ եւ ծախքը 8,144,400 զրշ:

Խարբերդի նահանգը 1898ին ժաւած է 243,123 սկիի ապրանք, եւ արտաճուած է 90,484 սկիի ապրանք:»

Տրապիզոնի հիւպատոս Պ. Լանկուրրա կը գրէ թէ 1898 ին ամբողջ նահանգին արտաճութիւնը եղած է 1,676,000 սկի, եւ ներածութիւնը՝ տասնոց հաշուելու պարսկական թրանդիզը՝ 1,830,800: — Հանդարտութիւնը եւ ապահովութիւնը կը տիրէր, հետեւաբար առեւտուրը վերակենդանացու եւ բարեօրոյցու: Ժողովուրդը հիմակ ոչ միայն ազատ շունչ կ'առնէ, այլ բիշ բիշ սկսած է իր վիճակը բարելաւել եւ շուրս զին նայել, կեանքի անհրաժեշտ եղած բաները ձեռք բերելու համար:

Պ. Լանկուրրա հետեւեալ շահեկան ցանկը կը հրատարակէ Տրապիզոնի նահանգին բնակիչներուն թիւին նկատմամբ 1885ին եւ 98ին.

	1885 ին	1898 ին
Խոլամ	798,000	932,716
Յոյն	150,000	181,044
Հայ	42,200	47,196
Հայ-կաթոլիկ	1,200	1,484
Քողոքական	4,000	1,102
Զանազան	200	273
	992,600	1,163,815

Ուրիշ շահեկան վիճակագիր մը ցոյց կուտայ թէ 1898ին նահանգին խոլամ վարժարաններուն թիւն էր 2,641 եւ աշակերտ-աշակերտուհիներունը՝ 82,082 (արու ժողովրդին հարիւրին 12. 40ը եւ կ'ը ժողովրդին

3. 30), յոյն վարժարաններուն թիւը 388 եւ աշակերտներունը 21,785 (արու ժողովրդին հարիւրին 17 եւ կ'ը ժողովրդին 7), իսկ հայ վարժարաններուն թիւը 78 եւ աշակերտներունը 4,515 (արու ժողովրդին հարիւրին 12. 30 եւ կ'ը ժողովրդին 5. 30): Ինչպէս կը տեսնուի այս ցանկէն, կրթական գործին մէջ խոլամներուն հետ զրեթէ հաւասար կ'երթանք, բայց Յոյներէն շատ ետ ենք զեռ:

ՃԱՄԱՆՑ

ԼՈՒՍՈՒԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Բարեկ երթալու համար Մարտիլլէն երբ շագիտոր մտայ, բարեկամ մը թերթերու ծրար մը քովս գրու սրպէս զի նամբան կարգամ: Չեղբիս հանդիպածը կ'առնէի: Քանի մը ժամ ետքը կայարանէ մը երիտասարդին մէկը վակոնս մտնելով վեմ աղաւաւորեցաւ: Օրագիրներուն մէջ հայերէններ ալ կը գտնուէին, հին ու նոր. շատնոց էր հայերէն թերթ տեսած չունէի. մինչ ետ աճունք աչքէ անցընելու վրայ էի, մէկէնիմէկ նորերը բունի զօպուած բարիութեան խուլ ձայնով մը ըսաւ.

— Ներողութիւն, պարսն, երեւի զուք հայ կը լինէր:

— Երեւի, պարսն, պատասխանեցի:

— Կարգալիս զուք ծիծաղում էք. այդ թերթը սոր զուք կարգում էք եւ ծիծաղում, Գաշնակցութեան օրդաններին մինն է. մենք թայլ չենք աալիս սր վազոնում Գաշնակցութեանս վրայ ծիծաղէք:

— Եւ եթէ ծիծաղի՞մ:

— Եւ եթէ ծիծաղէք, մենք մի թոսցիկով ձեր այդ հակայիզափոխական արարքը Գաշնակցութեանս բոլոր կոմիտէներին կը ծանուցանենք:

Հասկցայ թէ որոնցմէ պէտք է ըլլայ գէմինս. ա՛լ ճամբան պիտի չձանձրանայի. զուտընթիւնս նիւթը գտած էի: Բոպէտարք սրոշեցի առ խեւեկին հետ վարուելու եւ զանակս, ուստի բաի:

— Կը սխալիք, պարսն, ետ չեմ ծիծաղիր, այլ կ'ուրախանամ սր յեղափոխական թերթերը այսպիսի խորիմաստ յօդուածներ կը հրատարակեն:

— Ախ, այդ ջոկ. սր կ'ուրախան սք, սրեմն զուք մի լաւ Հայ պէտք է լինէր: Մի պապիրոս, պարսն:

Ու սիկառէթ մը երկնցուց:

— Շնորհակալ եմ, պարսն: Արգեօք սրո՛ւ հետ տեսակցելու բարերադրութիւնը սնիմ:

Խոտակիցս այցքարաւ տուաւ, վրան գրուած էր.

« ՅՅ. ԻԴԻՕԴՈՖ, Մտաւար տաշնորդ Հ. Յ.

Գաշնակցութեան Պոլսի կեդրոնական կոմիտէի:» Ժպտեցայ եւ ըսի.

— Չեր համբար լսած եմ, պարսն:

— Ստոյգ. հաւատում եմ որ դուք մի շատ լաւ Հայ պէտք է լինէք: Ազգանուններդ ինչ է եւ ինչով էք զբաղուում:

Ս' եւ է անուն մը տուի, եւ ըսի թէ արհեստաւոր մըն եմ, ծաղրանկարիչ:

— Ախ, դուք նկարիչ էք, պարոն. ուրեմն իմ պատկերը պէտք է մի օր շինէք:

— Անշուշտ, պարոն, անշուշտ, եւ շուտ: Խնդումով մը պատասխանեց.

— Դուք իմ պատկերը պէտք է շինէք. ես էլ ձեզ յիշատակահան պէտք է շինեմ:

— Շատ շնորհակալ պիտի ըլլամ. միայն սա կայ որ ձեր կուտակութեան գազափարները, ինչպէս կ'երեւի այս թերթէն, շատ խորիմաստ են. իմ խելքս այդքան բարձրերը չի հասնիր: Տեսէք, ինչ կ'ընեմ՝ չեմ կարող ձեր գրածները ըմբռնել:

— Ո՞րը չէք իմանում, ես ձեզ կը բացատրեմ:

— Օրինակի համար, սա յօդուածը որ «Ամենափառասկար հայ տարր» վերնագիրը կը կրէ: Ինչպէս կ'երեւի կ. Պոլսի Պանք Օթոմանի ցոյցին նպատակն է եղեր հարուածել Պոլսոյ հայ հարուստները, գաւառներու վաշխասունները: «Մեր աղա—վաշխասունները, կ'ըսէ, թէ Պոլսում եւ թէ՛ գաւառում» միացած են եղեր կզերին հետ ժողովրդին պէմ: Ասոնց կեղծները Պոլսին է եղեր, եւ հայ յեղափոխականը «Այդ պատճառով էլ իր հարուստները ուզ «զակի այն կողմը ուղղեց: Հոգ չէ, Հայ ժողովուրդը շատ «տանջվեց, դուք էլ մասնակից եղէք հասարակաց պա «տուհասին. մի քիչ էլ դուք տանջվեցէք ամբողջ Հայու «թեան համար. ձեր քնքշացած նեարդները կ'ամբանան: «Ընդհանուր աղէտը կը լրջացնէ ձեզ. եթէ ոչ ձեզ, դո՛ւ «ձեր գաւառներին»:

— Ախ, շատ գեղեցիկ է դոււմ, շա՛տ գեղեցիկ: Այո՛, պարոն, Բանկ Օսոմանի ցոյցը մահաբեր եղաւ հայ բուրժուաներին, հայ վաշխասուններին: Բայց դուք ո՞ր կէտն է չէք իմանում:

— Որքան լսած եմ, պարոն, Պոլսոյ կոտորածին միայն ինզճ համախնորր, Հայաստանի պանդուխտները զոհ դացին. հարուստի մը, վաշխասուտի մը քիթը շարունեցաւ: Ուրեմն ինչպէ՛ս տնոնք պատժուեցան:

Պ. Իլիօօֆի կարեկցութեան ժպիտով մը — ազիտութեանս վրայ կարեկցելով — ըսաւ.

— Պարոն, օգոստոս 26ի օրը հայ բուրժուաների, հայ վաշխասունների օջախը բանդուեց: Եթէ դուք ալ մեզ պէս սօցիալ դիտութիւնների հետ ծանօթ լինէիք, հեշտութեամբ կ'իմանայիք թէ Դաշնակցութիւնս այդ օրը իր նպատակին հասել է: Ես ձեզ այժմ կ'ամենում եմ բացատրել. իմ լօգիկային լաւ հետեւեցէք:

— Շա՛տ սրբախութեամբ, պարոն:

— Այդ պատմական օրը, պարոն, Պոլսում վեց հազար համալ, ոպատաւոր, օգարաշի ջարդուեց: Նրանք ամենքն էլ ծառայում էին բուրժուաներին մօտ: Այժմ որ նրանք չկան, նրանց տեղ բռնել են բուրժուաները, թուրքերը, բայց կրկնապատիկ սոճիկով: Միջին հաշուով մէկ հայ

համալ, սպասաւոր կամ օգարաշի տարէնը բառասուն սակի ստանում էր, այժմ մի բուրջ ստանում է ութսուն սակի. հայ բուրժուաների ծախսը կրկնապատակուեց: Վեց հազար հայ ստանում էին 240,000 սակի, այժմ բուրժուաները ստանում են 480,000 սակի, ուրեմն երեք տարվայ մէջ Պոլսի հայ բուրժուաները փխտեցին 720,000 սակի. սա՛տ տարվայ մէջ նրանք պէտք է կարսնցնեն երկու միլիոնից աւելի, չհաշուելով տոկոսը: Ուրեմն տեսնում էք թէ ինչպէս քանզիվեց նրանց սունը: Ես նրանց այդ բուրժուաների հերն անիծած: Այժմ, պարոն, տեսնում էք, ինչպէս այդ աղա—հանրմները արակվում են, տանջվում են ամբողջ Հայութեան համար: Եւ յետոյ, պարոն, այդ բուրժուաները, այդ բուրժուաները, այդ բուրժուաները, ինչպէս լսել ենք, նախկին ոպատաւորներ, օգարաշիներ են եղել, եւ հարստացել են: Երբ այժմ բուրժուաները, օգարաշիները ջարդուել են, էլ ս'ըտեղից պէտք է ծովեն բուրժուաներ, արիստոկրատներ:

— Օ՛հ, պարոն, գոչեցի, ինչ հեռատես քաղաքաշիտութիւն, ինչ ազնիւ մարդասիրութիւն:

— Չէ՛, պատասխանեց լայն հրճուանքով մը. գեո չեմ վերջացրել: Դուք, պարոն, անշուշտ իմացել էք թէ Հայաստանում վաշխասունները տղրուկների նման ծծում են ինզճ գիւղացու արիւնը: Այդ համախնորր, այդ օգարաշիները ինչ որ Պոլսում փող էին շինում ուղարկում էին վաշխասուններին. այժմ որ նրանք ջարդվել են, էլ ս'ըտեղաց վաշխասունները իրանց փողերը պէտք է ստանան: Նրանք մէկ միլիոն սակի են կարցրել: Այժմ նրանք փճացել են, եւ գիւղացի ժողովուրդը փրկուել է նրանցից: Տեսնում էք, պարոն, թէ ինչպէս սօցիալ դիտութիւնների լօգիկայով մարդասիրական դարձեր են կատարվում:

— Ուրեմն, պարոն Իլիօօֆ, Դաշնակցութեանս համար, սուլթանը ոչ թէ մեծ—մարդասպան մը այլ մեծ—մարդասէր մը պէտք է համարուի:

Պ. Իլիօօֆի ձախ ձեռքին ցուցամասը շրթունքներուն տանելով, ու խորհրդաւոր ժպիտով մը, որ հաւանութեան նշան էր, ըսաւ.

— Մ'ա՛տ

— Ձեր բացատրութիւններէն հասկցայ այս խորհրդաւոր սուղերուն իմաստը, եւ ձեր ծրագիրները. այժմ մի ուրիշ տեղեկութիւն:

— Համեցէք:

— Պարոն, տեսէք, սա յօդուածը. կը պախարակ այն յեղափոխականները որ յեղափոխութիւնը կը վարեն առանց յեղափոխութեան իսկական ասպարէզը, որ է Հայաստան, սոք կ'սխելու, այլ, ինչպէս կ'ըսէ «նստած Ռուսիայում, Բուլղարիայում, Եղիպատսում» Լա՛ւ, բայց ժընէ՛վը, պարոն, ինչ՞ա արդեօք մոտցեր է:

— Ախր, ինչ էք հարցնում, պարոն. ժընէվ ո՞ր տեղ է:

— Չուիցերիոյ մէջ, պարոն:

— Լաւ. գիտէք ուրեմն եթէ ժընէվ Շվեյցարիայումն է, ուրեմն նա Հայաստանումն է:

— Ինչպէ՛ս, ինչպէ՛ս, ըսի, վեր ցատեցելով:

— Զանգարախի՛ր, պարոն, հանգարտիր, իմ լօղիկա-
յին հետեւիր: Չեր Հուգօն ի՛նչ է ասել:

— Ի՛նչ է ասել, պարոն:

— Որ Հայաստան Ասիայի Շվեյցարիան է...

— Կարծեմ Լամարթիւնը առանկ բան մը ըսեր է, ոչ
թէ Հիւկօն:

— Միենայնն է. երկուքն էլ հոսհոսներ են, պօլա
հն: Ուրեմն, պարոն, եթէ Հայաստան Շվեյցարիա է, Շը-
վեյցարիա ալ Հայաստան պէտք է լինէ. չէ՞, ուրեմն մենք
Հայաստան ենք գործում:

Ինչ ըսելու չէի գիտեր, երբ շոգեկառքը կայնեցաւ, ու
«Մաքօն» ձայնը հնչեց:

— Ա՛խ, պարոն, ես պէտք է մեկնիմ. պէտք է ժընէլի
շոգեկառքը գնամ:

Ու անապարանքով ելաւ:

— Ուրեմն Կուր Հայաստան կը գնար:

— Այո՛, պարոն, այո՛, պէտք է գնամ լինների վե-
րայ, լճերի մէջ սանջիւմ, շարշարիմ հայ ազգի համար:
Յեղափոխական լինելը հեշտ գործ չէ:

ՍԿԵՊՏԻԿ

ԼՈՒՐԵՐ

«Սրակտարս»ի Պերլիէի քրիստոնէական հեռուէստ
օրինակները ուղարկուած եղելու տարբերակները կը հետազոտուին:

«Մայիս 21ին, բաւական դարձանք պատճառեց ու-
սական «Ալեքսանդր Բ. Կայսր» զրահատրին Եւրոպայի
լըքէն յանկարծական մեկնումը դեպի Մերսին: Հոն, դեր-
ժովակալ Սքրիտլոֆ եւ ուսական ընդհանուր հիւպատոս
Պ. Լիշին, սպաններու ընկերակցութեամբ, սուրիական
օրթոտոքս եկեղեցին դացին, ուր հազիւ մէկ ըսնի վայր-
կեան մնացին, յետոյ Յոյներուն եկեղեցին, եւ վերջապէս
Հայոց եկեղեցին: Հայոց եկեղեցիին ելլելուն, Մովակալը
ըսաւ մինչեւ կառքը իրեն ուղեկցող հայ եկեղեցականնե-
րուն եւ երեւելներուն. «Վերջերս շատ տառապեցաւ,
բայց քրիստոնէայ Մեծ Պետութիւն մը ձեզմով պիտի ըզ-
բաղի եւ ի հարկին իր պաշտպանութիւնը պիտի նուիրէ
ձեզի:» Մովակալը ֆրանսերէն ըսաւ այս խօսքերը, եւ
ուսա ընդհանուր հիւպատոսը գանձեց թիւրքերէնի թարգ-
մանեց՝ ի ներկայութեան շատ մը թիւրք պաշտօնաւար-
ներու:»

ՆՈՐ ՉԱՐԳ

Մուշէն կը ծանուցանեն թէ հոն կախ տեղի ունե-
ցեր է, եւ կեանքի կորուստ պատճառով է մասնաւորապէս
Հայոց մէջ: Զոներէն մեկն է սաւազնորդական տեղապահը:

Ոչրիչ անապրի մը համեմատ Մոշ ոչր հայ յե-
ղափոխական եւ հիւսկ քիչրը սպաննուէր են խառնու-
թիւններու միջոցիկ: Բազէ հիւսկ քիչրը սպաննուէր եւ
տասնըօրը հայ անքրիստոնէներ են:

Քիչրուէր Հայոց Սասունի Բունաշէն վանքի վանա-
հայրը սպաննուէր են:

«Թայրեզ»ի Կ. Պոլսոյ քրիստոնէական կը հետազոտուին
Գուշ-Գարուշի պատրիարքարանը հասած տեղեկութիւննե-
րը շատ ծանր կը նկարագրեն Բունաշէնի վանքի տեղա-
նակները: Քիչրուէր ոչ միայն վանահայրը այլ երկուս վանա-
կաններն ալ սպաննուէր ու վանքը կողոպտուէր են: Սերունք
եւ ոչրիչ հիւսկ գիշոյ թալանի տարի յետոյ այրեր եւ բազ-
մաքիչ գիշոպիներ սպաննուէր են:

Վիեննայէն հասած վերջին հեռագրութիւններուն նայելով,
Մուշի մէջ շարքուած Հայերուն թիւը 800 ի կը հասնի:
Պոլսոյ Հայոց մէջ վերին աստիճանի յուզումները կը տիրէ
եւ ծանր դեպքեր կը վախցուին:

Կ. Պոլսէն Լոնտոնի քերթերուն հետեւեալները կը
հետազոտուին:

Ռուսիոյ հիւսիսային-արեւելեան սահմանագլխիկ
վրայ զինուորական շարժումները Գրան վրոպայում կը
պատճառեն:

— Հայոց շարժումներուն հակառակ կայսրական Երեւան
օսմանեան հիշատակ մը մեկնուէրու համար Գրան կող-
մէ կախապէս Ռուսիոյ կողմնակալութեան եղած առաջարկը
մերժուած ըլլալով, Գուշը կրկին հետազոտուէր Բեղարքոյի
օսմանեան դեպքերին այլ տարուներէն ինքերէն հա-
մար:

— Հայ-կարդիկ Պարսկեան Հ. Յարուշէն վար-
դապետը իրողուած գտնուէր է Գոճաճրգի վանքը, Եւրոպայ
մօտ: Տեղական իշխանութիւնը ուստիական զինուորներու
ընկաւ մը հաներ է ուստագործները գտնուէր համար.
բազմաքիչ անքրիստոնէականներ տեղի ունեցեր են:

— Օրսկեան պատրիարք Գրան բողոքագիր մը գը-
րելով պատճառէր է կրիստոնէական կարողիկոսի ընտրութեան է.
ոչրիչ ինքիկներու տեղեկական կարգադրութիւնը, ինչ-
պէս է բանտարկեալներու սպանութիւններ:

— Փոքր-Ասիոյ յաստիկայ հունձրը կը յուսացուի ու
լաւ պիտի ըլլայ այս տարի, խի երբ մէկ քանի տասն
անձրեւներ տեղան, շատ լաւ հունձր մը կը յուսացուի:

ՀԱՍՏԻ ՈՐ ԲԱՍՆԵԿԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեկի
զրկել առ

L. FRANK,

32, CHESTERTON ROAD,

(ENGLAND).

LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին
եւ 13ին: Բաժնեկիւն է Եւրոպայի համար տարեկան 10
եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2
եւ վեցամսեայ 1 սոլար: